

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրազործման մասին»

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայությունը, Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայությունը և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր),

համաձայն «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 5.7 հոդվածի,

համաձայնեցին հետևյալի վերաբերյալ.

Հոդված 1

Սահմանումներ

Սույն Արձանագրության նպատակներով ստորև նշված հասկացությունները սահմանվում են հետևյալ ձևով՝

1. «Տեղեկություն» նշանակում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության տարածքից Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության տարածք արտահանված և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության տարածքից Եվրասիական տնտեսական միության անդամ պետության տարածք արտահանված ապրանքների վերաբերյալ մաքսային հայտարարագրերից և տրանսպորտային փաստաթղթերից վերցված վերաբերելի և ստույգ համակարգված տվյալներ:

2. «Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ» նշանակում է ըստ աշխարհագրական տարածքների տեղաբաշխված՝ լիազոր մարմինների պետական տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվական համակարգերի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների և

տեղեկատվական համակարգերի ամբողջություն՝ միավորված Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ազգային հատվածներով և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածով:

3. «Վիետնամի ազգային մեկ պատուհան» նշանակում է մեխանիզմ, որը ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցով մաքսային հայտարարատուին թույլ է տալիս մաքսային ընթացակարգերի և պետական կառավարման գերատեսչությունների ընթացակարգերի իրականացման համար ուղարկել արտահանվող և ներմուծվող ապրանքների վերաբերյալ տեղեկություններ ու էլեկտրոնային փաստաթղթեր:

4. «Ապրանքների բացթողում» նշանակում է մաքսային մարմինների գործողություն, որով հնարավորություն է տրվում մաքսագերծման գործընթացում գտնվող ապրանքները հանձնել շահագրգիռ անձանց տնօրինմանը:

Հոդված 2

Արձանագրության գործողության շրջանակը

Սույն Արձանագրությունը կիրառվում է Կողմերի միջև տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման նկատմամբ՝ մաքսային գործառնությունների իրականացումը դյուրացնելու, ապրանքների բացթողումն արագացնելու և մաքսային օրենքների ու կարգավորումների խախտումները կանխելու նպատակով:

Հոդված 3

Տեղեկությունների և տվյալների փոխանակումը

1. Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումն իրականացվում է կանոնավոր կերպով՝ սույն Արձանագրության՝ սահմանափակ հասանելիություն ունեցող (կոնֆիդենցիալ) փաստաթուղթ համարվող 1-ին Հավելվածով սահմանված տեխնիկական մասնագրերի համաձայն:

Կողմերն ապահովում են այդ հավելվածում պարունակվող տեղեկությունների պաշտպանությունը՝ դրա համապատասխան կանոններին և կարգավորումներին համապատասխան:

2. Կողմերը համապատասխան տեղեկությունները տրամադրում են ոչ ուշ, քան արտահանվող ապրանքների բացթողումից 4 ժամ հետո:

3. Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգի աշխատանքին ներկայացվող պահանջները և մասնագրերը, տվյալների կառուցվածքն ու սպասարկման մակարդակին ներկայացվող պահանջները սահմանված են Արձանագրության 1-ին Հավելվածով:

4. Կողմերի միջև փոխանակման ենթակա տեղեկատվական

պարամետրերի ցանկը սահմանված է Արձանագրության 2-րդ Հավելվածով:

5. Համաձայնագրի 5.7 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումն իրականացվում է փուլերով:

2018 թվականի հոկտեմբերի 5-ից սույն Արձանագրության կողմերը հաստատում են Համաձայնագրի կողմերի միջև շրջանառվող առանձին ապրանքների վերաբերյալ տեղեկությունների փորձնական փոխանակում: Տեղեկությունների փորձնական էլեկտրոնային փոխանակման համար նախատեսված ապրանքների ցանկը սահմանված է սույն Արձանագրության 3-րդ Հավելվածով:

2019 թվականի հոկտեմբերի 5-ից սկսվելու է տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման 2-րդ փուլի իրականացումը: Այս փուլում տեղեկությունների փոխանակման համար նախատեսված ապրանքների ցանկը սահմանվում է սույն Արձանագրության Հավելվածում:

2021 թվականի հոկտեմբերի 5-ից սկսվելու է տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման 3-րդ փուլի իրականացումը, մինչույն ժամանակ սույն Արձանագրության կողմերն ապահովելու են Համաձայնագրի կողմերի միջև շրջանառվող բոլոր ապրանքների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման կիրառումը:

6. Կողմերի փոխանակած տեղեկությունները պետք է լինեն ռուսերեն կամ վիետնամերեն:

Առանձին մանրամասների վերաբերյալ տեղեկությունները կարող են ներկայացվել՝ օգտագործելով լատինական այբուբենը:

7. Տեղեկությունների փոխանակումն իրականացվում է Միության հնտեգրված տեղեկատվական համակարգի և Վիետնամի ազգային մեկ պատուհանի կիրառմամբ:

8. Այն տեղեկությունները, որոնք փոխանցվում են մյուս Կողմին, փոխանակվում են նրա հետ կամ բաշխվում են նրան, օգտագործվում և պահպանվում են սույն Արձանագրության դրույթներին համապատասխան:

9. Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման նպատակներով Կողմերը կղեկավարվեն Համաշխարհային մաքսային կազմակերպության տվյալների մոդելով կամ, համապատասխան դեպքերում, Արձանագրության 1-ին Հավելվածով սահմանված տվյալների ցանկացած այլ մոդելով:

Հոդված 4

Տեղեկությունների անվտանգությունն ու գաղտնիությունը

1. Սույն Արձանագրության շրջանակներում փոխանակվող ցանկացած

տեղեկություն համարվում է կոնֆիդենցիալ, օգտագործվում է միայն մաքսային գործառնությունների նպատակով և չպետք է փոխանցվի երրորդ կողմի՝ առանց այդ տեղեկությունը տրամադրած Կողմի համաձայնության:

2. Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ինտեգրացիոն հատվածում տեղեկատվական անվտանգությունն ապահովվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ազգային հատվածներում տեղեկատվական անվտանգությունն ապահովվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից:

3. Վիետնամի ազգային մեկ պատուհանի տեղեկատվական անվտանգությունն ապահովվում է Վիետնամի կողմից:

4. Կողմերի միջև հաղորդակցության ուղիների տեղեկատվական անվտանգությանն առնչվող այն հարցերին, որոնք դուրս են Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի և Վիետնամի ազգային մեկ պատուհանի շրջանակից, Կողմերը կանդրադառնան համատեղ:

5. Տեղեկատվական անվտանգության և գաղտնիության պահանջների ապահովման տեխնիկական հայեցակետերը սահմանված են Արձանագրության 1-ին Հավելվածով:

Հոդված 5

Տվյալների ամբողջականությունը

1. Կողմերը պետք է ընդունեն տվյալների ամբողջականությանն ուղղված պահանջներ և միջոցներ, որոնք կապահովեն փոխանցվող ու փոխանակվող տեղեկությունների ամբողջականությունը:

2. Տվյալների ամբողջականությանն ուղղված պահանջները և միջոցները, որոնք կապահովեն փոխանցվող ու փոխանակվող տեղեկությունների ամբողջականությունը դրանց ստեղծման, փոխանցման և պահպանման բոլոր փուլերի ժամանակ, սահմանված են Արձանագրության 1-ին Հավելվածով:

Հոդված 6

Առանցքային կետը

Կողմերը կնշանակեն սույն Արձանագրության իրականացումը դիտանցելու և վերահսկելու համար պատասխանատու իրենց կոնտակտային կետերը և կտեղեկացնեն միմյանց դրանց մասին:

Հոդված 7

Հաղորդակցությունն արտակարգ իրավիճակներում

1. Եթե առկա է որևէ Կողմի ներպետական իրավունքի խախտման արժանահավատ հիմք կամ ապացույց՝ կապված այնպիսի ապրանքներ սխալ հայտարարագրելու կամ չհայտարարագրելու հետ, որոնց վերաբերյալ տեղեկություններ են փոխանակվում սույն Արձանագրության համաձայն, ապա ցանկացած Կողմ կարող է հետաձգել այդ տեղեկությունների փոխանակումը՝ մինչև խախտման պատճառը ստուգելը:

2. Այն Կողմը, որի՝ սույն Արձանագրությամբ սահմանված պարտավորությունների կատարումը կանխվել կամ հետաձգվել է, անհապաղ ծանուցում է մյուս Կողմերին՝ ներկայացնելով դեպքի բոլոր մանրամասները և իր՝ սույն Արձանագրությամբ սահմանված պարտավորությունների կատարումը կանխող կամ հետաձգող պատճառները, և այդ Կողմը գործադրում է բոլոր հնարավոր ջանքերը՝ նման դեպքի ազդեցությունը մեղմացնելու համար:

Այդպիսի դեպքը դադարելուց հետո, Կողմը, որին վերաբերել է տվյալ դեպքը, վերսկսում է իր՝ սույն Արձանագրությամբ սահմանված պարտավորությունների կատարումը՝ դա գործնականում ողջամտորեն հնարավոր դառնալուն պես:

Հոդված 8

Վեճերի կարգավորումը

Սույն Արձանագրության իրականացման ժամանակ առաջացող ցանկացած վեճ կարգավորվում է Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 9

Փոփոխությունները

Սույն Արձանագրությունը կարող է փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդ փոփոխությունները պետք է ձևակերպվեն առանձին արձանագրություններով և կազմեն սույն Արձանագրության անբաժանելի մասը:

Հոդված 10

Ուժի մեջ մտնելը

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կատարված է Բրյուսելում, 2018 թվականի հունիսի 28-ին՝ վեց բնօրինակից, անգլերենով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի կողմից**

**Վիետնամի Սոցիալիստական
Հանրապետության ֆինանսների
նախարարության կողմից**

**Բելառուսի Հանրապետության պետական
մաքսային կոմիտեի կողմից**

**Ղազախստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության կողմից**

**Ղրղզստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
մաքսային ծառայության կողմից**

**Ռուսաստանի Դաշնության դաշնային
մաքսային ծառայության կողմից**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի 5.7 հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակման իրազրոծման մասին» Արձանագրությանը

Հայաստանի Հանրապետության համար Արձանագրությունն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության կողմից դիվանագիտական ուղիներով Եվրասիական տնտեսական միությանը և Վիետնամին իր համապատասխան ներպետական ընթացակարգերը ավարտելու մասին ծանուցելու ամսաթվից:

Հայաստանի Հանրապետության

պետական եկամուտների կոմիտեի նախագահ

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Սահմանափակ հասանելիության համար

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Եվրասիական տնտեսական միության
անդամ պետությունների և
Վիետնամի Սոցիալիստական
Հանրապետության կենտրոնական
մաքսային մարմինների միջև
«Եվրասիական տնտեսական միության
և դրա անդամ պետությունների՝
մի կողմից, և
Վիետնամի Սոցիալիստական
Հանրապետության՝ մյուս կողմից,
միջև ազատ առևտրի մասին»
2015 թվականի մայիսի 29-ի
համաձայնագրի 5.7 հոդվածի
համաձայն՝ տեղեկությունների
փոխանակման իրագործման մասին»
Արձանագրության

**Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման իրագործման
տեխնիկական մասնագրերը**

103 թերթ

I. Փաստաթղթի նպատակը

Սույն տեխնիկական մասնագրերով սահմանվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ Միություն, անդամ պետություններ) և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության (այսուհետ՝ Վիետնամ) կենտրոնական մաքսային մարմինների միջև մաքսային տեղեկությունների փոխանակման տեխնիկական պահանջները, ծառայությունները, կազմը, տվյալների և էլեկտրոնային հաղորդագրությունների կառուցվածքը և կանոնները:

II. Փաստաթղթի վերանայման ժամանակագրությունը

Վերանայման համարը	Վերանայման ամսաթիվը	Փոփոխությունների նկարագրությունը	Փոփոխություններ նախաձեռնողը
01.00	31. 05. 2018	Փաստաթղթի առաջին	

		տարբերակը	
--	--	-----------	--

III. Եզրույթները, հասկացություններն ու հապավումները

Սույն փաստաթղթի նպատակով կիրառվում են հետևյալ եզրույթներն ու հապավումները՝

«ԻՏՀ»՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ.

«SOAP» (Simple Object Access Protocol)՝ բաշխված հաշվողական միջավայրում հաղորդագրությունների փոխանակման հաղորդակարգ.

«UUID» (Universally Unique Identifier)՝ համընդհանուր եզակի նույնացուցիչ.

«XML» (eXtensible Markup Language)՝ Համաշխարհային սարդոստայնի կոնսորցիումի (W3C) կողմից առաջարկված գծանշումների ընդլայնվող լեզու.

«անհամաժամ փոխգործակցություն»՝ տվյալների էլեկտրոնային փոխանակման տեսակ, որի դեպքում ուղարկողը վերսկսում է իր աշխատանքը հաղորդագրությունն ուղարկելուց անմիջապես հետո՝ չսպասելով ստացողի արձագանքին.

«բիզնես գործընթաց»՝ տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման իրագործմանն ուղղված՝ փոխկապակցված գործառնությունների և ընթացակարգերի ամբողջություն.

«բիզնես գործընթացի գործառնություն»՝ հերթական, կրկնվող գործողություն, որը բիզնես գործընթացի որոշակի մասնակցի գործառնությունների, խնդիրների ամբողջության մասն է կազմում.

«բիզնես գործընթացի ընթացակարգ»՝ բիզնես գործընթացի մասնակիցների կողմից իրականացվող և բիզնես գործընթացում կոնկրետ խնդրի լուծմանն ուղղված՝ փոխկապակցված գործառնությունների ամբողջություն.

«դասակարգիչ»՝ դասակարգված օբյեկտների անվանումների համակարգված, կառուցվածքավորված և ծածկագրված ցանկ.

«կապուղի»՝ էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցման համար նախատեսված միաուղղորդված ցանցային միացում.

«Control Error»՝ բացառման ազդանշանի տեսակ, որն առաջանում է այն ժամանակ, երբ ռեսպոնդենտի կողմից ստացված ծանուցումն ստուգվում է, կամ երբ լրանում է ստացված տեղեկությունները ռեսպոնդենտի կողմից մշակման ընդունելու մասին ծանուցման սպասման ժամանակը.

«տեղեկագիր»՝ բովանդակությամբ կամ բնույթով համասեռ տեղեկությունների համակարգված, կառուցվածքավորված և կոնֆիդենցիալ ցանկ.

«արտաքին անցուղի»՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ենթահամակարգ, որն ապահովում է արտաքին տեղեկատվական համակարգերի հետ փոխգործակցությունը.

«տեղեկատվական ռեսուրս»՝ տեղեկատվական համակարգերում պարունակվող փաստաթղթավորված տեղեկությունների (տվյալների բազաներ, տեղեկությունների այլ զանգվածներ) կանոնակարգված ամբողջություն.

«տեղեկատվական համակարգ»՝ տեղեկատվական ռեսուրսների մշակումն ապահովող տեղեկատվական տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների ամբողջություն.

«նախաձեռնող»՝ տրանզակցիան նախաձեռնող՝ տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասնակից.

«հաղորդագրություն»՝ տեղեկատվական և հեռահաղորդակցական ցանցերի օգնությամբ ուղարկողից ստացողին հաղորդվող ձևայնացված տեղեկատվություն.

«բիզնես գործընթացի մասնակից»՝ գործընթացի իրականացման ընթացքում տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասնակից.

«ստացող պետություն»՝ Վիետնամից ապրանքներ ներմուծող որևէ անդամ պետություն կամ Վիետնամը՝ որպես որևէ անդամ պետությունից ապրանքներ ներմուծող.

«ռեսպոնդենտ»՝ տրանզակցիայի շրջանակներում նախաձեռնողի հետ հաղորդագրություններ փոխանակող՝ տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասնակից.

«ուղարկող պետություն»՝ Վիետնամ ապրանքներ արտահանող որևէ անդամ պետություն կամ Վիետնամը՝ որպես որևէ անդամ պետություն ապրանքներ արտահանող.

«ծառայություն»՝ օգտագործողների բիզնես գործառույթների կատարումն ապահովելու նպատակով նրանց տեղեկատվական տեխնոլոգիաների ռեսուրսներ տրամադրելու գործընթացը. ընձեռում է պահանջվող գործառույթները սահմանված ժամանակահատվածում կատարելու հնարավորություն.

«տրանզակցիա»՝ երկու մասնակիցների միջև տարրական տեղեկատվական փոխգործակցություն, որն իրականացվում է յուրաքանչյուր մասնակցի կողմից բիզնես գործընթացի իր գործառնության շրջանակներում:

IV. Ընդհանուր տեղեկություններ

4.1. Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման ընդհանուր սկզբունքները

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումն իրականացվում է կանոնավոր կերպով՝ ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազաներից տվյալներ պարունակող էլեկտրոնային հաղորդագրությունները փոխանակելու միջոցով:

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման դեպքում կիրառվող տվյալների բովանդակությանն ու կառուցվածքին ներկայացվող պահանջները սահմանվում են Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ Համաշխարհային առևտրի անվտանգության և դյուրացման (SAFE) շրջանակային ստանդարտներով, այդ թվում՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության տվյալների մոդելի կիրառման մասով:

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման կանոններին և կարգավորումներին ներկայացվող պահանջները չեն ներառում ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայի կառուցվածքին և դրանց կազմակերպման կանոններին, ծառայությունների և ծրագրային ապահովման ընթացիկ աշխատանքին ներկայացվող պահանջներ, քանի որ այդ պահանջներն ու կանոնները սահմանվում են անդամ պետությունների և Վիետնամի օրենսդրությամբ:

4.2. Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասնակիցները

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումն իրականացվում է հետևյալ մասնակիցների միջև. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական ծառայության, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի, Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայության՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ֆինանսների նախարարության (Վիետնամի գլխավոր մաքսային վարչություն) միջև՝ մյուս կողմից:

4.3. Հիմնական տեխնիկական լուծումները

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից տրամադրվող՝ Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի և Վիետնամի ազգային մեկ պատուհանի ծառայությունների կիրառմամբ:

Վիետնամի մաքսային մարմինների կողմից փոխանցվող տեղեկություններն արտաքին անցուղու ծառայությունների միջոցով մուտք են գործում Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ, այնուհետև անդամ պետությունների համապատասխան ազգային հատվածների միջոցով երթուղվում ստացող անդամ պետությունների մաքսային մարմիններ:

Անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից փոխանցվող տեղեկություններն անդամ պետությունների համապատասխան ազգային հատվածների միջոցով փոխանցվում են Միության ինտեգրված տեղեկատվական համակարգ, այնուհետև մուտք են գործում արտաքին անցուղի, իսկ հետո

փոխանցվում Վիետնամի մաքսային մարմիններին՝ Վիետնամի ազգային մեկ պատուհանի ծառայությունների կիրառմամբ:

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումն իրականացվում է տրանսպորտային, տեխնոլոգիական և կիրառական մակարդակներում: Տրանսպորտային մակարդակում արտաքին անցուղու և Վիետնամի ազգային մեկ պատուհանի՝ տեղեկատվական փոխգործակցության ծառայությունների միջև տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման ընթացակարգերն ապահովում են տվյալների առաքումը մեկ մասնակցի համակարգից մյուս մասնակցի համակարգ՝ HTTPS հաղորդակարգի միջոցով:

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման ընթացակարգերը տեխնոլոգիական մակարդակում ապահովում են մասնակիցների միջև հաղորդագրությունների փոխանակումը տրանսպորտային տվյալների առաքման հաղորդակարգերի միջոցով: Արտաքին անցուղու և Վիետնամի ազգային մեկ պատուհանի՝ տեղեկատվական փոխգործակցության ծառայությունների միջև տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումը տեխնոլոգիական մակարդակում իրականացվում է SOAP ձևաչափով հաղորդագրությունների միջոցով:

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման ընթացակարգերը կիրառական մակարդակում ապահովում են էլեկտրոնային տեղեկությունների փոխանակում (այսուհետ՝ կիրառական տվյալներ) տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասնակիցների միջև՝ հաղորդագրությունների միջոցով: Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումն իրականացվում է անհամաժամ փոխգործակցության միջոցով:

Հաղորդագրությունների կառուցվածքին և ձևաչափին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տեխնոլոգիական մակարդակում հաղորդագրությունների փոխանակման կարգը սահմանվում են սույն տեխնիկական մասնագրերի 6-րդ և 7-րդ բաժիններին համապատասխան:

4.4. Տեղեկությունների եզակի նույնականացմանը ներկայացվող պահանջները

Կիրառական մակարդակում տեղեկությունների եզակի նույնացուցիչն ապրանքների մասին հայտարարագրերի գրանցման համարն է, որը տրամադրվում է որպես հաղորդագրության կիրառական տվյալների մի մաս: Տրամադրվող տվյալների կառուցվածքի նկարագրությունը ներկայացված է Ա Առդիրում:

Տեխնոլոգիական մակարդակում հաղորդագրության եզակի նույնացուցիչ է համարվում վերնագրային բլոկում ուղարկվող հաղորդագրության նույնացուցիչը:

Տեխնոլոգիական մակարդակում հաղորդագրությունների

կապակցվածությունը որոշվում է վերնագրային բլոկում ուղարկվող՝ կապակցված հաղորդագրության նույնացուցիչի միջոցով:

Վերնագրային բլոկում փոխանցվող տեղեկությունների նկարագրությունը ներկայացված է 7.2 բաժնում (Վերնագրային բլոկերի կառուցվածքը):

V. Բիզնես գործընթացի նկարագրությունը (տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման վերաբերյալ կարգավորումներ)

Բիզնես գործընթացի մասնակիցների ցանկը ներկայացված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Բիզնես գործընթացի մասնակիցների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
DECLARATION.ACT.001	Ուղարկող մաքսային մարմին	Մաքսային մարմին, որը պատրաստում և իր՝ ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկություններ է տրամադրում ստացող մաքսային մարմնին:
DECLARATION.ACT.002	Ստացող մաքսային մարմին	Մաքսային մարմին, որն ուղարկող մաքսային մարմնի՝ ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկություններ է ստանում, մշակում և պահպանում:

Փոխանակման մասնակիցների միջև բիզնես գործընթացի շրջանակներում տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է 2-րդ աղյուսակում ներկայացված՝ բիզնես գործընթացի ընթացակարգերին համապատասխան:


Աղյուսակ 2

Բիզնես գործընթացի ընթացակարգերը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
DECLARATION.PRC.001	Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում	Կիրառում է ուղարկող մաքսային մարմինը՝ ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկություններ տրամադրելու համար

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
DECLARATION.PRC.002	Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում	կիրառում է ուղարկող մաքսային մարմինը՝ ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկություններում փոփոխություններ կատարելու համար
DECLARATION.PRC.003	Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ տրամադրված տեղեկությունների չեղարկում	կիրառում է ուղարկող մաքսային մարմինը՝ ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայում առկա տեղեկությունները չեղարկելու վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համար

Բիզնես գործընթացի կառուցվածքի նկարագրությունը ներկայացված է 1-ին գծապատկերում:




Գծ. 1. Բիզնես գործընթացի կառուցվածքը

5.1 Բիզնես գործընթացի ընթացակարգերը

5.1.1. «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» ընթացակարգը

«Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.PRC.001)

ընթացակարգի սխեման ներկայացված է 2-րդ գծապատկերում:



Գծ. 2. «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.PRC.001) ընթացակարգի կատարման սխեմա

«Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.PRC.001) ընթացակարգը կիրառվում է ստացող պետություն արտահանվելիք ապրանքների վերաբերյալ տեղեկություններ պարունակող՝ ապրանքների մասին հայտարարագրերի (այսուհետ՝ ապրանքների մասին հայտարարագիր) դեպքում: «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.PRC.001) ընթացակարգն սկսվում է ոչ ուշ, քան արտահանվող ապրանքների բացթողումից 4 ժամ հետո:

«Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.OPR.001) ընթացակարգը կատարվում է առաջինը, որից հետո ուղարկող մաքսային մարմինը պատրաստում է ապրանքների մասին հայտարարագրերից տեղեկությունները և դրանք ուղարկում ստացող մաքսային մարմին:

Ստացող մաքսային մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրերից տեղեկություններն ստացվելուց հետո կատարվում է «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ստացում և մշակում» (DECLARATION.OPR.002) ընթացակարգը, որից հետո ապրանքների մասին հայտարարագրերից տեղեկությունները ներառվում են ստացող մաքսային

մարմնի տվյալների բազայում:

Այն բանից հետո, երբ ուղարկող մաքսային մարմինն ստացող մաքսային մարմնից ստանում է ծանուցում ապրանքների մասին հայտարարագրերից տեղեկություններն ստանալու և մշակելու վերաբերյալ, կատարվում է «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում» (DECLARATION.OPR.003) ընթացակարգը, որին հաջորդում է «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.PRC.001) ընթացակարգը:

«Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.PRC.001) ընթացակարգին հաջորդում է ուղարկող մաքսային մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրերից տրամադրված տեղեկությունների ներառումը ստացող մաքսային մարմնի տվյալների բազայում: Որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.PRC.001) ընթացակարգի մաս իրականացված բիզնես գործընթացի գործառնությունների ցանկը ներկայացված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.PRC.001) ընթացակարգի մաս իրականացված՝ բիզնես գործընթացի գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
DECLARATION.OPR.001	Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների տրամադրում	ներկայացված է սույն փաստաթղթի 4-րդ աղյուսակում
DECLARATION.OPR.002	Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ստացում և մշակում	ներկայացված է սույն փաստաթղթի 5-րդ աղյուսակում
DECLARATION.OPR.003	Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցումների ստացում և մշակում	ներկայացված է սույն փաստաթղթի 6-րդ աղյուսակում

Աղյուսակ 4

Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների տրամադրում (DECLARATION.OPR.001)

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.OPR.001
2	Գործառնությունը	ապրանքների հայտարարագրից տեղեկությունների տրամադրում
3	Կատարողը	ուղարկող մաքսային մարմին
4	Կատարման պայմանները	սկսվում է արտահանվող ապրանքների բացթողումից հետո
5	Սահմանափակումները	գործառնությունն սկսվում է ոչ ուշ, քան արտահանվող ապրանքների բացթողումից 4 ժամ հետո
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը սույն տեխնիկական մասնագրերին համապատասխան ստեղծում և ուղարկում է ապրանքների մասին հայտարարագրի տվյալները պարունակող հաղորդագրություն
7	Արդյունքները	ապրանքների մասին հայտարարագրերից տեղեկություններ պարունակող հաղորդագրությունը պատրաստվել և ուղարկվել է ստացող մաքսային մարմին

Աղյուսակ 5

Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների ստացում և մշակում (DECLARATION.OPR.002)

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.OPR.002
2	Գործառնությունը	ապրանքների մասին հայտարարագրերից տեղեկությունների ստացում և մշակում
3	Կատարողը	ստացող մաքսային մարմին
4	Կատարման պայմանները	սկսվում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունները ստանալուց հետո
5	Սահմանափակումները	գործառնությունն սկսվում է ոչ ուշ, քան ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններն ստանալուց 15 րոպե հետո

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը սույն տեխնիկական մասնագրերին համապատասխան ստանում և մշակում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկություններ, ապա ձևավորում և ուղարկում է դրանց մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում
7	Արդյունքները	պատրաստվել և ստացող մաքսային մարմին է ուղարկվել ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում

Աղյուսակ 6


Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում (DECLARATION.OPR.003)

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.OPR.003
2	Գործառնությունը	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում
3	Կատարողը	ուղարկող մաքսային մարմին
4	Կատարման պայմանները	սկսվում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո
5	Սահմանափակումները	գործառնությունն սկսվում է ոչ ուշ, քան ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում ստանալուց 15 րոպե հետո
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը սույն տեխնիկական մասնագրերին համապատասխան ստանում և մշակում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցումը
7	Արդյունքները	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցումն ստացվել և մշակվել է

5.1.2. «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը

«Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների

տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» (DECLARATION.PRC.002) ընթացակարգի սխեման ներկայացված է 3-րդ գծապատկերում:



Գծ. 3 «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» (DECLARATION.PRC.002) ընթացակարգի կատարման սխեման

«Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» (DECLARATION.PRC.002) ընթացակարգը կատարվում է ապրանքների մասին այն հայտարարագրերի մասով, որոնցից ստացող մաքսային մարմնին ավելի վաղ որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» ընթացակարգի մաս տվյալներ են տրամադրվել, ինչպես նաև հետագայում փոփոխված տեղեկությունների մասով:

«Ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.OPR.004) գործառնությունը կատարվում է առաջինը, որից հետո ուղարկող մաքսային մարմինը պատրաստում է ապրանքների մասին հայտարարագրերից փոփոխված տեղեկությունները և դրանք ուղարկում ստացող մաքսային մարմին:

Ստացող մաքսային մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տվյալներ ստացվելուց հետո կատարվում է «Ապրանքների

հայտարարագրից փոփոխված տեղեկությունների ստացում և մշակում» (DECLARATION.OPR.005) գործառնությունը, որից հետո փոփոխությունները ներառվում են ստացող մաքսային մարմնի տվյալների բազայում, և պատրաստվում է ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում:

Ուղարկող մաքսային մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ այդպիսի ծանուցում ստացվելուց հետո իրականացվում է «Ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում» (DECLARATION.OPR.006) գործառնությունը, որով ավարտվում է «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» (DECLARATION.PRC.002) ընթացակարգը:

«Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» (DECLARATION.PRC.002) ընթացակարգի արդյունքում ուղարկող մաքսային մարմնի կողմից տրամադրված՝ փոփոխությունների ենթարկված տեղեկությունները ներառվում են ստացող մաքսային մարմնի տվյալների բազայում:

Որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» (DECLARATION.PRC.002) ընթացակարգի մաս իրականացվող բիզնես գործընթացի գործառնությունների ցանկը ներկայացված է 7-րդ աղյուսակում:

Որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» (DECLARATION.PRC.002) ընթացակարգի մաս իրականացվող բիզնես գործընթացի գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
DECLARATION.OPR.004	Ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների տրամադրում	ներկայացված է սույն փաստաթղթի 8-րդ աղյուսակում
DECLARATION.OPR.005	Ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների ստացում և մշակում	ներկայացված է սույն փաստաթղթի 9-րդ աղյուսակում
DECLARATION.OPR.006	Ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում	ներկայացված է սույն փաստաթղթի 10-րդ աղյուսակում

Աղյուսակ 8

Ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների տրամադրում (DECLARATION.OPR.004)

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.OPR.004
2	Գործառնությունը	ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների տրամադրում
3	Կատարողը	ուղարկող մաքսային մարմին
4	Կատարման պայմանները	սկսվում է ապրանքների մասին այն հայտարարագրում փոփոխություններ կատարելուց հետո, որից ստացող մաքսային մարմինն նախկինում որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» ընթացակարգի մաս տեղեկություններ են տրամադրվել
5	Սահմանափակումները	գործառնությունն սկսվում է ոչ ուշ, քան ապրանքների մասին հայտարարագրում փոփոխություններ կատարելուց 4 ժամ հետո
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը սույն տեխնիկական մասնագրերին համապատասխան պատրաստում և ուղարկում է ապրանքների մասին հայտարարագրերից փոփոխված տեղեկությունները պարունակող հաղորդագրություն

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
7	Արդյունքները	ապրանքների մասին հայտարարագրերից փոփոխված տեղեկությունները պարունակող հաղորդագրությունը պատրաստվել և ուղարկվել է ստացող մաքսային մարմին

Աղյուսակ 9

Ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների ստացում և մշակում (DECLARATION.OPR.005)

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.OPR.005
2	Գործառնությունը	ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների ստացում և մշակում
3	Կատարողը	ստացող մաքսային մարմին
4	Կատարման պայմանները	սկսվում է ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկություններն ստանալուց հետո
5	Սահմանափակումները	գործառնությունն սկսվում է ոչ ուշ, քան ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկություններն ստանալուց 15 րոպե հետո
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը սույն տեխնիկական մասնագրերին համապատասխան ստանում և մշակում է ապրանքների մասին հայտարարագրերից փոփոխված տեղեկությունները, պատրաստում և ուղարկում է դրանց մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում
7	Արդյունքները	պատրաստվել և ստացող մաքսային մարմին է ուղարկվել ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում

Աղյուսակ 10


Ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում (DECLARATION.OPR.006)

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.OPR.006

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
2	Գործառնությունը	ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում
3	Կատարողը	ուղարկող մաքսային մարմին
4	Կատարման պայմանները	սկսվում է ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո
5	Սահմանափակումները	գործառնությունն սկսվում է ոչ ուշ, քան ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցումն ստանալուց 15 րոպե հետո
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը սույն տեխնիկական մասնագրերին համապատասխան ստանում և մշակում է ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցումը
7	Արդյունքները	ստացվել և մշակվել է ապրանքների մասին հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում

5.1.3. «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ տրամադրված տեղեկությունների չեղարկում» ընթացակարգը

«Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ տրամադրված տեղեկությունների չեղարկում» (DECLARATION.PRC.003) ընթացակարգի սխեման ներկայացված է 4-րդ գծապատկերում:



Գծ. 4 «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ տրամադրված տեղեկությունների չեղարկում» (DECLARATION.PRC.003) ընթացակարգի կատարման սխեման

«Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ տրամադրված տեղեկությունների չեղարկում» (DECLARATION.PRC.003) ընթացակարգն իրականացվում է ապրանքների մասին այն հայտարարագրերի մասով, որոնցից ստացող մաքսային մարմինն նախկինում որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» ընթացակարգի մաս տվյալներ են տրամադրվել, և որոնց մասով բացթողումից հետո հետկանչը թույլատրվել է մաքսային մարմնի կողմից:

«Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.OPR.007) գործառնությունը կատարվում է առաջինը, որից հետո ուղարկող մաքսային մարմինը պատրաստում է ապրանքների մասին հայտարարագրերից նախկինում տրամադրված տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկություններ և դրանք ուղարկում ստացող մաքսային մարմին:

Ստացող մաքսային մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրերից նախկինում տրամադրված տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկություններ ստանալուց հետո իրականացվում է «Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների ստացում և մշակում» (DECLARATION.OPR.008)

գործառնությունը, որից հետո ապրանքների մասին հայտարարագրից նախկինում տրամադրված տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունները ներառվում են ստացող մաքսային մարմնի տվյալների բազայում, և պատրաստվում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում:

Ուղարկող մաքսային մարմնի կողմից ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո իրականացվում է «Ապրանքների մասին հայտարարագրերից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում» (DECLARATION.OPR.009) գործառնությունը, որին հաջորդում է «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ տրամադրված տեղեկությունների չեղարկում» (DECLARATION.PRC.003) ընթացակարգը:

«Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ տրամադրված տեղեկությունների չեղարկում» (DECLARATION.PRC.003) ընթացակարգի արդյունքում ապրանքների մասին հայտարարագրերից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունները ներառվում են ստացող մաքսային մարմնի տվյալների բազայում: Որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ տրամադրված տեղեկությունների չեղարկում» (DECLARATION.PRC.003) ընթացակարգի մաս իրականացված բիզնես գործընթացի գործառնությունների ցանկը ներկայացված է 11-րդ աղյուսակում:

Աղյուսակ 11

Որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից ավելի վաղ տրամադրված տեղեկությունների չեղարկում» (DECLARATION.PRC.003) ընթացակարգի մաս իրականացված բիզնես գործընթացի գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
DECLARATION.OPR.007	Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների տրամադրում	ներկայացված է սույն փաստաթղթի 12-րդ աղյուսակում
DECLARATION.OPR.008	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների ստացում և մշակում	ներկայացված է սույն փաստաթղթի 13-րդ աղյուսակում

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
DECLARATION.OPR.009	Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում	ներկայացված է սույն փաստաթղթի 14-րդ աղյուսակում

Աղյուսակ 12

Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների տրամադրում (DECLARATION.OPR.007)

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.OPR.007
2	Գործառնությունը	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների տրամադրում
3	Կատարողը	ուղարկող մաքսային մարմին
4	Կատարման պայմանները	սկսվում է ապրանքների մասին այն հայտարարագրերի չեղարկումից հետո, որից ստացող մաքսային մարմինն նախկինում որպես «Ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազայից տեղեկությունների տրամադրում» ընթացակարգի մաս տեղեկություններ են տրամադրվել
5	Սահմանափակումները	գործառնությունն սկսվում է ոչ ուշ, քան ապրանքների մասին հայտարարագրերը հետ կանչելուց 4 ժամ հետո
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը սույն տեխնիկական մասնագրերին համապատասխան պատրաստում և ուղարկում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկություններ պարունակող հաղորդագրություն
7	Արդյունքները	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկություններ պարունակող հաղորդագրությունը պատրաստվել և ուղարկվել է ստացող մաքսային մարմին

Աղյուսակ 13

Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների ստացում և մշակում (DECLARATION.OPR.008)

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
-----	-------	-----------------

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.OPR.008
2	Գործառնությունը	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների ստացում և մշակում
3	Կատարողը	ստացող մաքսային մարմին
4	Կատարման պայմանները	սկսվում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկություններն ստանալուց հետո
5	Սահմանափակումները	գործառնությունն սկսվում է ոչ ուշ, քան ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկություններն ստանալուց 15 րոպե հետո
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը սույն տեխնիկական մասնագրերին համապատասխան ստանում և մշակում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունները, պատրաստում և ուղարկում է տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում
7	Արդյունքները	պատրաստվել և ստացող մաքսային մարմին է ուղարկվել ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում

Աղյուսակ 14

Ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում (DECLARATION.OPR.009)

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.OPR.009
2	Գործառնությունը	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում և մշակում
3	Կատարողը	ուղարկող մաքսային մարմին
4	Կատարման պայմանները	սկսվում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո

Թիվ	Տարրը	Նկարագրությունը
5	Սահմանափակումները	գործառնությունն սկսվում է ոչ ուշ, քան ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցում ստանալուց 15 րոպե հետո
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը սույն տեխնիկական մասնագրերին համապատասխան ստանում և մշակում է ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցումը
7	Արդյունքները	ապրանքների մասին հայտարարագրից տեղեկությունների չեղարկման վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցումն ստացվել և մշակվել է

5.2. Բիզնես գործընթացի իրականացման ընթացքում փոխգործակցության կարգավորումը

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման բիզնես գործընթացի իրականացման ընթացքում մասնակիցների միջև տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է տրանզակցիաների միջոցով:

Տեղեկատվական փոխգործակցությամբ որոշվում է տրանզակցիաների կատարման հերթականությունը, որոնցից յուրաքանչյուրը հաղորդագրությունների փոխանակում է բիզնես գործընթացի մասնակիցների միջև՝ ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային օրինակների տվյալների բազաները սինքրոնացնելու նպատակով: Յուրաքանչյուր տեղեկատվական փոխգործակցության դեպքում սահմանվում են գործառնությունների և դրանց համապատասխան տրանզակցիաների միջև փոխադարձ կապեր:

Տրանզակցիան իրականացնելիս ուղարկող մաքսային մարմինը (նախաձեռնողը) կատարված գործառնության (նախաձեռնողական գործառնության) շրջանակներում հաղորդագրություն է ուղարկում ստացող մաքսային մարմին (ռեսպոնդենտին), որին ի պատասխան ստացող մաքսային մարմինները կատարված գործառնության (ստացման գործառնության) շրջանակներում պատասխան հաղորդագրություն են ուղարկում:

Բիզնես գործընթացի ընթացքում փոխանակված հաղորդագրությունները ձևավորվում են սույն տեխնիկական մասնագրերի 7-րդ բաժնում ներկայացված պահանջներին համապատասխան:

Բիզնես գործընթացի յուրաքանչյուր ընթացակարգի համար 15-րդ աղյուսակում ներկայացված է բիզնես գործընթացի գործառնությունների, տեղեկատվական օբյեկտների միջանկյալ ու վերջնական վիճակների և տրանզակցիաների միջև կապը:

Տրանզակցիաների ցանկը


Թիվ	Նախաձեռնողի կողմից իրականացվող գործառնությունը	Բիզնես գործընթացի տեղեկատվական օբյեկտի միջանկյալ վիճակը	Ռեսպոնդենտի կողմից իրականացվող գործառնությունը	Բիզնես գործընթացի տեղեկատվական օբյեկտի վերջնական վիճակը	Տրանզակցիան
1	Տեղեկությունների ներկայացում ապրանքների հայտարարագրերի էլեկտրոնային պատճենների տվյալների բազայից (DECLARATION.PRC.001)				
1.1	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում (DECLARATION.OPR.001): Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում և մշակում (DECLARATION.OPR.003)	Ապրանքների հայտարարագիր (DECLARATION.BE N.001). տեղեկություններն ուղարկվել են	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ստացում և մշակում (DECLARATION.OP R.002)	Ապրանքների հայտարարագիր (DECLARATION.BE N.001). տեղեկություններն ստացվել են	Ապրանքների հայտարարագրերի ց տեղեկությունների ներկայացում (DECLARATION.TRN.001)
2	Ապրանքների հայտարարագրերից էլեկտրոնային պատճենների տվյալների բազայից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում (DECLARATION.PRC.002)				
2.1	Ապրանքների հայտարարագրից փոփոխված տեղեկությունների ներկայացում (DECLARATION.OPR.004): Ապրանքների հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում և մշակում (DECLARATION.OPR.006)	Ապրանքների հայտարարագիր (DECLARATION.BE N.001). փոփոխություններն ուղարկվել են	Ապրանքների հայտարարագրից փոփոխված տեղեկությունների ստացում և մշակում (DECLARATION.OP R.005)	Ապրանքների հայտարարագիր (DECLARATION.BE N.001). փոփոխություններն ստացվել են	Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում (DECLARATION.TRN.002)
3	Ապրանքների հայտարարագրերի էլեկտրոնային պատճենների տվյալների բազայից ավելի վաղ				

Թիվ	Նախաձեռնողի կողմից իրականացվող գործառնությունը	Բիզնես գործընթացի տեղեկատվական օբյեկտի միջանկյալ վիճակը	Ռեսպոնդենտի կողմից իրականացվող գործառնությունը	Բիզնես գործընթացի տեղեկատվական օբյեկտի վերջնական վիճակը	Տրանզակցիան
ներկայացված տեղեկությունները չեղյալ համարելը (DECLARATION.PRC.003)					
3.1	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունները չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկությունների ներկայացում (DECLARATION.OPR.007): Ապրանքների հայտարարագրից տեղեկությունները չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում և մշակում (DECLARATION.OPR.009)	Ապրանքների հայտարարագիր (DECLARATION.BE.N.001). չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկություններն ուղարկվել են	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունները չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկությունների ստացում և մշակում (DECLARATION.OPR.008)	Ապրանքների հայտարարագիր (DECLARATION.BE.N.001). չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկություններն ստացվել են	Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունները չեղյալ համարելը (DECLARATION.TRN.003)

5.2.1. «Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում» տրանզակցիա

«Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում» տրանզակցիան (DECLARATION.TRN.001) իրականացվում է ապրանքների հայտարարագրից տեղեկություններն Ուղարկող մաքսային մարմնից (Նախաձեռնող) Ստացող մաքսային մարմին (Ռեսպոնդենտ) փոխանցելու համար:

Այս տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 5-րդ գծապատկերում:




Գծ. 5. «Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում» տրանզակցիայի կատարման սխեման

5.2.2. «Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» տրանզակցիա

«Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» տրանզակցիան (DECLARATION.TRN.002) իրականացվում է ապրանքների հայտարարագրի տվյալներում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններն Ուղարկող մաքսային մարմնից (Նախաձեռնող) Ստացող մաքսային մարմին (Ռեսպոնդենտ) փոխանցելու համար:

Այս տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 6-րդ գծապատկերում:




Գծ. 6. «Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» տրանզակցիայի իրականացումը

5.2.3. «Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունները չեղյալ համարելը» տրանզակցիա

«Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունները չեղյալ համարելը» տրանզակցիան (DECLARATION.TRN.003) իրականացվում է ապրանքների հայտարարագրից տեղեկությունները չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկություններն Ուղարկող մաքսային մարմնից (Նախաձեռնող) Ստացող մաքսային մարմին (Ռեսպոնդենտ) փոխանցելու համար:

Այս տրանզակցիայի կատարման սխեման ներկայացված է 7-րդ գծապատկերում:



Գծ. 7. «Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունները չեղյալ համարելը» տրանզակցիայի կատարման սխեման

VI. Փոխանցվող տեղեկությունների կազմը և կառուցվածքը

6.1. Փոխանցվող տեղեկությունների կազմը

Փոխանցվող տեղեկությունների բովանդակությունը, այդ թվում՝ տարրերի ցանկը, դրանց նկարագրությունը և պարտադիր կամ ոչ պարտադիր լինելու վերաբերյալ տեղեկությունները նշված են «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինների միջև «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 5.7 հոդվածի համաձայն տեղեկությունների փոխանակում իրականացնելու մասին» արձանագրության 2-րդ հավելվածում:

6.2. Փոխանցվող տեղեկությունների կառուցվածքը

Փոխանցվող տեղեկությունների կառուցվածքների և դրանց լրացման ու հսկողության կանոնների նկարագրությունը ներկայացված է Ա հավելվածում: Փոխանցվող տեղեկությունների և հաղորդագրությունների կառուցվածքի նկարագրությունը W3C XML-սխեմաների լեզվական նոտացիայով ներկայացված է Գ հավելվածում: Փոխանցվող տվյալների և XML-փաստաթղթերի օրինակները ներկայացված են Դ հավելվածում:

VII. Հաղորդագրությունների կառուցվածքը և ձևաչափը

7.1. Ընդհանուր պահանջները և կիրառելի ստանդարտները

Նկարագրված բիզնես գործընթացի շրջանակներում փոխանցվող տեղեկությունները պետք է լինեն XML ձևաչափով՝ Գծանշումների ընդլայնվող լեզու (XML) 1.0 ստանդարտին (հինգերորդ խմբագրություն) համապատասխան, որը կարելի է գտնել <http://www.w3.org/TR/REC-xml> հասցեում:

Հաղորդագրությունների կառուցվածքը և ձևաչափը նկարագրելիս օգտագործվում են 16-րդ աղյուսակում ներկայացված անվանատարածքները, ինչպես նաև 17-րդ աղյուսակում ներկայացված մասնագրերը:

Աղյուսակ 16

Փաստաթղթի անվանատարածքների ցանկը

Նախաձևանցը	Հասցեն
soap	http://www.w3.org/2003/05/soap-envelope
wsa	http://www.w3.org/2005/08/addressing
xs	http://www.w3.org/2001/XMLSchema

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասնակիցների միջև փոխանցվող SOAP հաղորդագրությունը նախապատրաստվում է SOAP 1.2 մասնագրին համապատասխան և բաղկացած է վերնագրերի բլոկից (soap: Header) և բովանդակության բլոկից (soap: Body):

Վերնագրերի բլոկը պարունակում է հաղորդագրության երթուղման և մշակման, ինչպես նաև տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մոնիթորինգի համար պահանջվող տեխնոլոգիական տեղեկություններ:

Աղյուսակ 17

Հաղորդագրությունների կառուցվածքը և ձևաչափը նկարագրելու համար օգտագործվող մասնագրերը

Կրճատ անվանումը	Մասնագրի լրիվ անվանումը

Կրճատ անվանումը	Մասնագրի լրիվ անվանումը
SOAP 1.2	SOAP տարրերակ 1.2, մաս 1. Հաղորդագրությունների շրջանակ (Երկրորդ խմբագրություն): W3C առաջարկություն, 2007 թվականի ապրիլի 27: http://www.w3.org/TR/soap12-part1
WS-Addressing 1.0-Core	Համացանցային ծառայությունների հասցեագրում 1.0-Core: W3C առաջարկություն, 2006 թվականի մայիսի 9: http://www.w3.org/TR/ws-addr-core
XML 1.0	Գծանշումների ընդլայնվող լեզու (XML) 1.0 (Հինգերորդ խմբագրություն). W3C առաջարկություն, 2008 թվականի նոյեմբերի 26. http://www.w3.org/TR/2008/REC-xml-20081126
XMLDSIG	Էլեկտրոնային ստորագրության շարահյուսություն և մշակում XML-ում, տարրերակ 1.1(XML Signature Syntax and Processing Version) W3C առաջարկություն, 2013 թվականի ապրիլի 11 https://www.w3.org/TR/xmlsig-core1/

Բովանդակության բլոկը ներառում է տեղեկությունների էլեկտրոնային մասնակիցների համար կարևոր կիրառական կամ տեխնոլոգիական տեղեկություններ և պետք է համապատասխանի փոխանցվող տվյալների կառուցվածքին՝ Գ հավելվածին համապատասխան:

Դրա բոլոր բլոկների հաղորդագրությունը և բովանդակությունը նախապատրաստելիս պետք է օգտագործվի UTF-8 ծածկագրումը: Փոխանցվող հաղորդագրության առավելագույն երկարությունը 100 ՄԲ է:

Բովանդակության բլոկը լրացնելու ցուցումը ներկայացված է Ա հավելվածի աղյուսակում:

Ա հավելվածի աղյուսակի «Բազմ.» սյունակը ցույց է տալիս տարրերի պարտադիր լինելը, ինչպես նաև տարրի նմուշների առավելագույն քանակը.

1՝ Վավերապայմանը պարտադիր է, կրկնություններ չեն թույլատրվում,

n՝ Վավերապայմանը պարտադիր է, պետք է կրկնվի n անգամ, $n > 1$,

0..1՝ Վավերապայմանը կամընտրական է, կրկնություններ չեն թույլատրվում,

0..*՝ Վավերապայմանը կամընտրական է, կարող է կրկնվել առանց սահմանափակումների,

0..m՝ Վավերապայմանը կամընտրական է, կարող է կրկնվել ոչ ավելի, քան m անգամ, $m > 1$,

1..*՝ Վավերապայմանը կամընտրական է, կարող է կրկնվել առանց սահմանափակումների,

n..*¹ Վավերապայմանը պարտադիր է, պետք է կրկնվի առնվազն n անգամ, $n > 1$,

n..m¹ Վավերապայմանը պարտադիր է, պետք է կրկնվի առնվազն n անգամ և ոչ ավելի, քան m անգամ, $n > 1, m > n$:

Բիզնես գործընթացն իրականացնելիս տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում ուղարկվող հաղորդագրությունների ցանկը ներկայացված է 18-րդ աղյուսակում:

Աղյուսակ 18

Փոխանցվող հաղորդագրությունների կառուցվածքը

<i>Կառուցվածքի նույնականացուցիչը (հաղորդագրության նույնականացուցիչը)</i>	<i>Տեղեկության տեսակը</i>	<i>Նպատակը</i>
Հայտարարագիր (DECLARATION.MSG.001)	Տեղեկություններ ապրանքների հայտարարագրից	պարունակում է տեղեկություններ ապրանքների հայտարարագրից
Պատասխան (DECLARATION.MSG.002)	Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում	ապրանքների հայտարարագրից տեղեկություններ պարունակող հաղորդագրության մշակման արդյունքի մասին ծանուցում. տեղեկություններ
Հայտարարագիր (DECLARATION.MSG.003)	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների փոփոխություններ	պարունակում է փոփոխված տեղեկություններ ¹ ապրանքների հայտարարագրից
Պատասխան (DECLARATION.MSG.004)	Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում	ապրանքների հայտարարագրից փոփոխված տեղեկություններ պարունակող հաղորդագրության մշակման արդյունքի մասին ծանուցում
Հայտարարագիր (DECLARATION.MSG.005)	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների չեղյալ համարում	պարունակում է ապրանքների հայտարարագրից տեղեկությունները չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկություններ
Պատասխան (DECLARATION.MSG.006)	Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում	ապրանքների հայտարարագրից տեղեկությունները չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկություններ պարունակող հաղորդագրության մշակման արդյունքի մասին ծանուցում

7.2. Վերնագրերի բլոկների կառուցվածքը

Վերնագրերի բլոկը ներառում է վերնագրեր՝ WS-Addressing 1.0 – Core մասնագրին համապատասխան, ինչպես նաև փոխգործակցության համար օգտագործվող հատուկ վերնագրեր:

Վերնագրերի բլոկը ներառում է հետևյալ վերնագրերը՝

ա) `wsa:To`՝ ստացողի վերաբերյալ տեղեկություններ պարունակող վերնագիր,

բ) `wsa:From`՝ ուղարկողի տրամաբանական այնպիսի հասցե պարունակող վերնագիր, որին պետք է ուղարկվի պատասխան հաղորդագրությունը,

գ) `wsa:MessageID`՝ հաղորդագրության նույնականացուցիչ պարունակող վերնագիր,

դ) `wsa:RelatesTo`՝ հաղորդագրության հղումային նույնականացուցիչ պարունակող վերնագիր,

ե) `wsa:Action`՝ հաղորդագրության բովանդակությունը նույնականացնող վերնագիր,

`wsa:To` վերնագիրը պարտադիր է և պետք է պարունակի ստացողի տրամաբանական հասցեն: Տրամաբանական հասցեն օգտագործվում է Արտաքին անցուղու և Վիետնամի ազգային մեկ պատուհանի՝ տեղեկությունների փոխանակման ծառայությունների միջև փոխանակվող հաղորդակցությունները ստացողին նույնականացնելու համար:

`wsa:From` վերնագիրը պարտադիր է լրացման համար և պետք է պարունակի ուղարկողի տրամաբանական հասցեն:

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասնակիցների տրամաբանական հասցեների ցանկը ներկայացված է 19-րդ աղյուսակում:

`wsa:MessageID` վերնագիրը պարտադիր է և օգտագործվում է հաղորդագրությունների առանձին օրինակների եզակի նույնականացման համար: Հաղորդագրությունների նույնականացուցիչների արժեքները պետք է լինեն եզակի ընդհանրական և լինեն UUID՝ համաձայն RFC 4122 մասնագրի:

`wsa:Action` վերնագիրը նախատեսված է տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասնակիցներին Բիզնես գործընթացի այն ընթացակարգի վերաբերյալ տեղեկացնելու համար, որով փոխանցվում է հաղորդագրությունը:

`wsa:RelatesTo` վերնագիրը նախատեսված է հաղորդագրությունների շղթան

կազմակերպելու համար:

wsa:RelatesTo վերնագիրը պետք է պարունակի սկզբնական հաղորդագրության wsa:MessageID վերնագիրը: Այս դեպքում wsa:MessageID վերնագիրը պետք է լրացվի նոր արժեքով:

Աղյուսակ 19

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման մասնակիցների տրամաբանական հասցեները

Փոխանակման մասնակցի տրամաբանական հասցեն	Փոխանակման մասնակիցը
DECLARATION.AM	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
DECLARATION.BY	Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտե
DECLARATION.KG	Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական ծառայություն
DECLARATION.KZ	Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտե
DECLARATION.RU	Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայություն
DECLARATION.VN	Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ֆինանսների նախարարություն (Վիետնամի գլխավոր մաքսային վարչություն)

Բիզնես գործընթացի շրջանակներում փոխանցվող կիրառական հաղորդագրության wsa:Action վերնագիրը լրացվում է ռեսուրսների նույնականացման միասնականացված ձևաչափին (URI) համապատասխան, որը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ տարանջատված «/» նշանով.

- ա) ֆիքսված «tr://» նախաձանցը,
- բ) DECLARATION նույնականացուցիչը,
- գ) հաղորդագրության բովանդակության վերաբերյալ տեղեկությունների բաղադրիչները:

Հաղորդագրության բովանդակության վերաբերյալ տեղեկությունների բաղադրիչները նշվում են հետևյալ հաջորդականությամբ.

- ա) փոխգործակցության ծառայությունների տարբերակը,
- բ) սույն տեխնիկական մասնագրերի 5.1 պարբերության մեջ սահմանված ընթացակարգի ծածկագիրը.

գ) սույն տեխնիկական մասնագրերի 5.2 պարբերության մեջ սահմանված տրանզակցիայի ծածկագիրը.

դ) սույն տեխնիկական մասնագրերի 7.1 պարբերության մեջ սահմանված հաղորդագրության ծածկագիրը:

Լրացման օրինակ՝ `wsa:Action:tr://DECLARATION/0.1/DECLARATION.PRC.001/DECLARATION.TRN.001/DECLARATION.MSG.001`

VIII. Տեղեկատուների և դասակարգիչների օգտագործումը

Հատուկ տեղեկատուներն ու դասակարգիչներն օգտագործվում են տեղեկությունների փոխանակման համար: Բիզնես գործընթացի տեղեկատուների և դասակարգիչների ցանկը ներկայացված է 20-րդ աղյուսակում:

Աղյուսակ 20

Բիզնես գործընթացի տեղեկատուների և դասակարգիչների ցանկը

Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը	Աղբյուրը
Երկրների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է երկրների ծածկագրերի և անվանումների ցանկը (օգտագործվում է ISO 3166 ստանդարտին համապատասխան)	https://www.iso.org/obp/ui/#iso:std:iso:3166:-1:ed-3:v1:en,fr
Արժույթի դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է արժույթների ծածկագրերն ու անվանումները՝ ISO 4217 ստանդարտին համապատասխան	https://www.iso.org/obp/ui/#iso:std:iso:4217:ed-8:v1:en
Լեզվի դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է լեզուների ծածկագրերի ու անվանումների ցանկ՝ <i>IETF RFC 5646</i> և <i>IANA Language Subtag Registry</i> համապատասխան	https://tools.ietf.org/html/rfc5646 և https://www.iana.org/assignments/language-subtag-registry/language-subtag-registry

Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը	Աղբյուրը
Առաքման պայմանների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է առաքման պայմանների ծածկագրերի ցանկը՝ 2000 և 2010 թվականների Միջազգային առևտրային պայմաններին (Incoterms) համապատասխան	http://store.iccwbo.org/icc-guide-to-incoterms-2000 և http://store.iccwbo.org/incoterms-2010-wallcharts
Միասնական ապրանքային անվանացանկ, որը հիմնված է Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգի և Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի վրա:	դասակարգիչ	Այն պարունակում է ապրանքների ծածկագրերի և անվանումների ցանկը	http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/ett/Pages/default.aspx http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/psn/Pages/default.aspx
Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգ (ՆՀ ծածկագիր), որը համատեղելի է Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի սակագնային ներդաշնակեցված համակարգի (AHTN) հետ:	դասակարգիչ	Այն պարունակում է ապրանքների ծածկագրերի և անվանումների ցանկը	http://www.wcoomd.org/en/topics/nomenclature/instrument-and-tools/hs-nomenclature-2017-edition/hs-nomenclature-2017-edition.aspx

Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը	Աղբյուրը
Չափման միավորների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է չափման միավորների ծածկագրերի և անվանումների ցանկ	https://portal.eaeunion.org/sites/odata/_layouts/15/Portal.EEC.Registry.Ui/DirectoryForm.aspx?ViewId=61f9080c-730e-4dfb-addb-2e6b11d5e84b&ListId=0e3ead06-5475-466a-a340-6f69c01b5687&ItemId=283#
Չափման միավորների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է չափման միավորների ծածկագրերի և անվանումների ցանկ	Պետք է ներկայացվի Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կողմից
Տրանսպորտային միջոցների և ապրանքների փոխադրման դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների և ապրանքների փոխադրման տեսակների և համապատասխան ծածկագրերի ցանկ	https://portal.eaeunion.org/sites/odata/_layouts/15/Portal.EEC.Registry.Ui/DirectoryForm.aspx?ViewId=61f9080c-730e-4dfb-addb-2e6b11d5e84b&ListId=0e3ead06-5475-466a-a340-6f69c01b5687&ItemId=272#
Տրանսպորտային միջոցների և ապրանքների փոխադրման դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների և ապրանքների փոխադրման տեսակների և համապատասխան ծածկագրերի ցանկ	Պետք է ներկայացվի Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կողմից
Մաքսային հայտարարագրման համար օգտագործվող փաստաթղթերի և տեղեկությունների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է մաքսային հայտարարագրման համար օգտագործվող փաստաթղթերի և տեղեկությունների ծածկագրերի և անվանումների ցանկ	https://portal.eaeunion.org/sites/odata/_layouts/15/Portal.EEC.Process11/TreeListForm.aspx?ViewId=TreeView&ListId=0e3ead06-5475-466a-a340-6f69c01b5687&ItemId=277
Մաքսային հայտարարագրման համար օգտագործվող փաստաթղթերի և տեղեկությունների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է մաքսային հայտարարագրման համար օգտագործվող փաստաթղթերի և տեղեկությունների տեսակների ծածկագրերի և անվանումների ցանկ	Պետք է ներկայացվի Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կողմից

Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը	Աղբյուրը
ՄԱԿ-ի ԷԴԻՖԱԿՏ ծածկագրերի ցանկ՝ 8053 Սարքավորման տեսակի ծածկագրի որոշիչ	դասակարգիչ	ծածկագիր, որով որոշվում է սարքավորման տեսակը	http://www.unece.org/trade/untidd/d08a/tred/tred8053.htm
ՄԱԿ-ի ԷԴԻՖԱԿՏ ծածկագրերի ցանկ՝ 3035 Մասնակցի գործառույթի ծածկագրի որոշիչ	դասակարգիչ	ծածկագիր, որով մասնակցին տրվում է հատուկ նշանակություն: Պարտադիր է բոլոր հաղորդագրությունների բոլոր NAD սեզմենտներում:	https://www.unece.org/trade/untidd/d00a/tred/tred3035.htm
ՄԱԿ-ի ԷԴԻՖԱԿՏ ծածկագրերի ցանկ՝ 3155 Հաղորդակցության համարի ծածկագրի որոշիչ	դասակարգիչ	հաղորդակցության համարը նույնականացնող ծածկագիրը	https://www.unece.org/fileadmin/DA M/trade/untidd/d17b/tred/tred3155.htm

Տեղեկատուներից և դասակարգիչներից մանրամասն ներկայացված տեղեկությունների կազմը և կառուցվածքը սահմանված են Բ հավելվածով:

Տեղեկատուների և դասակարգիչների թարմացումն իրականացվում է դրանց՝ Միության կամ Վիետնամի կողմից օգտագործվող թարմացված տարբերակների ներկայացման դեպքում:

IX. Փոխգործակցության տեխնիկական ասպեկտների և պարամետրերի նկարագրությունը

9.1. Ընդհանուր տեղեկություններ

Բիզնես գործընթացն իրականացնելիս տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգը սահմանված է սույն փաստաթղթի 5-րդ բաժնում:

Տրանզակցիայի իրականացման ժամանակ ուղարկված հաղորդագրություններից յուրաքանչյուրը պետք է հաջողությամբ մշակվի, կամ տրանզակցիայի հաղորդագրությունների մշակումից առաջացած՝ բիզնես գործընթացի մասնակիցների համակարգերում կիրառական մակարդակի բոլոր փոփոխությունները պետք է չեղարկվեն:

Տրանզակցիաների շրջանակներում օգտագործվում են հաղորդագրությունների հետևյալ տեսակները՝ բիզնես գործընթացի հաղորդագրություններ, հաստատման ազդանշաններ, բացառման ազդանշաններ:

Բիզնես գործընթացի հաղորդագրությունը կիրառական հաղորդագրություն է, որը պարունակում է սույն փաստաթղթի 5.2 բաժնում ներկայացված կանոնակարգին համապատասխան բիզնես գործընթացի մասնակիցների միջև փոխանցվող՝ կիրառական տվյալների հավաքածու:

Հաստատման ազդանշանը կիրառական հաղորդագրություն է, որը վկայում է բիզնես գործընթացի հաղորդագրության մշակման փուլը հաջողությամբ անցնելու մասին:

Բացառման ազդանշանը կիրառական հաղորդագրություն է, որը վկայում է բիզնես գործընթացի հաղորդագրության մշակման կանոնակարգային ընթացակարգից շեղվելու մասին:

Հաստատման և բացառման ազդանշանների նկարագրությունը ներկայացված է սույն փաստաթղթի 9.4 բաժնում:

Հուսալի տեղեկատվական փոխգործակցության իրականացման նպատակով նախատեսվում է բիզնես գործընթացի հաղորդագրության կրկնակի ուղարկման հնարավորություն, եթե չի ստացվել որևէ պատասխան, կամ ստացվել է սխալ գործընթացի վերաբերյալ հաղորդագրություն:

Հաղորդագրությունը կրկին ուղարկելու դեպքում պետք է ձևավորվի նոր `wsa:MessageID`:

Տրանզակցիայի շրջանակում հաղորդագրությունների միջև կապի ապահովման համար բիզնես գործընթացի բոլոր հաղորդագրությունների համար, բացառությամբ տրանզակցիան սկզբնավորող հաղորդագրությունների, լրացվում է `wsa:RelatesTo` դաշտը:

`Wsa:RelatesTo` դաշտը պարունակում է տրանզակցիայի իրականացման նախորդ փուլում բիզնես գործընթացի մասնակցի կողմից ստացված՝ `wsa:MessageID` հաղորդագրության նույնականացուցիչը:

Կրկնօրինակների (կրկնակի ուղարկված հաղորդագրությունների) հսկողությունը (հետագծումն) ապահովելու նպատակով պետք է հսկվեն կիրառական տվյալների կառուցվածքները: Այս դեպքում, եթե Ստացող մաքսային մարմինը հայտնաբերում է, որ հաղորդագրությունն Ուղարկող մաքսային մարմնի կողմից ուղարկվել է կրկնակի, ապա Ստացող մաքսային մարմինը պետք է կրկին ձևակերպի և ուղարկի պատասխան:

9.2. Հաղորդագրության փոխանակման ընթացակարգ

Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման տրանզակցիայի (սույն փաստաթղթի 5.2 բաժնում սահմանված բոլոր տրանզակցիաների դեպքում) կատարման ընթացքում իրականացվում է հաղորդագրության փոխանակման հետևյալ հաջորդականությունը:

Նախաձեռնողը Ռեսպոնդենտի հասցեով ուղարկում է հարցում և մինչև որպես ստացումը հաստատելու համար վերջնաժամկետ սահմանված ժամկետը լրանալը սպասում է հարցումն ստանալու մասին հաստատման:

Ռեսպոնդենտն ստանում է հարցումը և, սույն փաստաթղթի 9.3 բաժնում նշված կանոնակարգին համապատասխան, իրականացնում է գործընթացն ու կառուցվածքային հսկողությունը և Նախաձեռնողին է ուղարկում «Ստացվել է» հաստատման ազդանշանը:


Ռեսպոնդենտից «Ստացվել է» հաստատման ազդանշանը մշակելուց հետո Նախաձեռնողը մինչև որպես մշակումը հաստատելու համար վերջնաժամկետ սահմանված ժամկետը լրանալը սպասում է հարցման մեջ պարունակվող տեղեկությունների մշակման ընդունումը հաստատելուն:

Ռեսպոնդենտն իրականացնում է հարցման մեջ պարունակվող տվյալների հսկողություն՝ սույն փաստաթղթի 9.3 բաժնում նշված կանոնակարգին համապատասխան, և հաստատում է մշակման համար ընդունված տեղեկությունների ընդունումը՝ Նախաձեռնողին ուղարկելով «Ընդունվել է մշակման համար» հաստատման ազդանշանը:

Ռեսպոնդենտից ստացված «Ընդունվել է մշակման համար» հաստատման ազդանշանը մշակելուց հետո Նախաձեռնողը մինչև որպես պատասխանն ստանալու համար վերջնաժամկետ սահմանված ժամկետը լրանալը սպասում է պատասխանի:

Ռեսպոնդենտը մշակում է ստացված հարցումը և պատասխան է ուղարկում Նախաձեռնողին:

Տրանզակցիայի կատարման հաջորդականությունը ներկայացված է 8-րդ գծապատկերում:



Գծ. 8 Տրանզակցիայի կատարման հաջորդականությունը

9.3. Ստացողի կողմից հաղորդագրության մշակման ընթացակարգը

Ստացողը հաղորդագրությունները մշակում է հետևյալ տիպային փուլերին համապատասխան՝

- ա) հաղորդագրության տեխնոլոգիական հսկողություն,
- բ) բովանդակության բլոկի կառուցվածքային հսկողություն,
- գ) բովանդակության բլոկի տվյալների մշակում:

Հաղորդագրության տեխնոլոգիական հսկողությունը ներառում է հաղորդագրության սահմանված ձևաչափերին և կառուցվածքներին հաղորդագրության կառուցվածքի համապատասխանության ստուգում՝ առանց հաշվի առնելու փոխանցվող կիրառական տվյալները, ինչպես նաև հաղորդագրությունների վերնագրերի մակարդակով հաղորդագրությունների կապակցվածության հսկողություն:

Եթե հաղորդագրության տեխնոլոգիական հսկողության իրականացման արդյունքում հայտնաբերվել են սխալներ, և ստուգվող հաղորդագրությունը չի համարվում սխալ գործընթացի վերաբերյալ հաղորդագրություն, ապա ստացողը պետք է ուղարկողին ուղարկի սխալ գործընթացի վերաբերյալ `soap:Sender հաղորդագրություն՝ WS-Addressing 1.0 – Binding` մասնագրին համապատասխան:

Բովանդակության բլոկի կառուցվածքային հսկողությունը ներառում է

տվյալների սահմանված կառուցվածքներին դրա կառուցվածքի համապատասխանության ստուգում (ըստ XSD սխեմայի):

9.4. Տրանզակցիաների պարամետրերը

Տրանզակցիաները պետք է իրականացվեն տրանզակցիաների տվյալ պարամետրերին համապատասխան:

«Ստացումը հաստատելու ժամանակ» պարամետրով սահմանվում է ուղարկողի կողմից բիզնես գործընթացի հաղորդագրությունն ուղարկելու և «Ստացվել է» հաստատման ազդանշանը ստանալու միջև ընկած առավելագույն ժամանակահատվածը:

Բիզնես գործընթացի հաղորդագրությունն ուղարկողը պետք է հաղորդագրությունը կրկին ուղարկի, եթե ստացողը համաձայնեցված ժամկետում չի հաստատել ստացումը: Կրկնությունների քանակը սահմանվում է «Կրկնությունների քանակը» պարամետրի օգտագործմամբ:

«Մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակ» պարամետրով սահմանվում է ուղարկողի կողմից բիզնես գործընթացի հաղորդագրությունն ուղարկելու և «Ընդունվել է մշակման համար» հաստատման ազդանշանն ստանալու միջև ընկած առավելագույն ժամանակահատվածը:

Ուղարկողը պետք է հաղորդագրությունը կրկին ուղարկի, եթե Ստացող մաքսային մարմինը համաձայնեցված ժամկետում չի հաստատել ստացումը: Կրկնությունների քանակը սահմանվում է «Կրկնությունների քանակը» պարամետրի օգտագործմամբ:

«Պատասխանի սպասելու ժամանակ» պարամետրով սահմանվում է Նախաձեռնողի կողմից բիզնես գործընթացի հաղորդագրությունը (հարցում) ուղարկելու և հարցման (պատասխանի) մշակման արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հետ Ռեսպոնդենտի պատասխանն ստանալու միջև ընկած առավելագույն ժամանակահատվածը:

Նախաձեռնողը պետք է հարցումը կրկին ուղարկի, եթե համաձայնեցված ժամկետում որևէ պատասխան չի ստացել Ռեսպոնդենտից: Կրկնությունների քանակը սահմանվում է «Կրկնությունների քանակը» պարամետրի օգտագործմամբ:

«Ստացումը հաստատելու ժամանակ», «Մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակ» և «Պատասխանի սպասելու ժամանակ» պարամետրերով սահմանված ընթացակարգային վերջնաժամկետների պահպանման հսկողության պատասխանատվությունը դրված է ուղարկողի վրա: Ստացողը որևէ պատասխանատվություն չի կրում այս պարամետրերը հսկելու համար:

«Կրկնությունների քանակը» պարամետրով սահմանվում է բիզնես գործընթացի հաղորդագրությունների առավելագույն քանակը:

Իրավիճակը, որի դեպքում բոլոր կրկնությունները սպառվել են, իսկ անհրաժեշտ հաղորդագրություններն ուղարկողի կողմից չեն ստացվել, համարվում է արտակարգ:

9.4.1. «Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում» տրանզակցիայի պարամետրերը

Բիզնես գործընթացի «Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում» տրանզակցիայի DECLARATION.TRN.001 պարամետրերը ներկայացված են 21-րդ աղյուսակում

Աղյուսակ 21

«Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում» տրանզակցիայի (DECLARATION.TRN.001) նկարագրությունը

Թիվ	Պարամետրերը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.TRN.001
2	Տրանզակցիայի անվանումը	ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում
3	Նախաձեռնողը	Ուղարկող մաքսային մարմին
4	Սկզբնավորող գործառնությունը	ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում
5	Ռեսպոնդենտը	Ստացող մաքսային մարմին
6	Ընդունող գործառնությունը	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ստացում և մշակում
7	Տրանզակցիայի արդյունքը	Ապրանքների հայտարարագիր (DECLARATION.BEN.001), տեղեկություններն ստացվել են
8	Տրանզակցիայի պարամետրերը.	
	ստացումը հաստատելու ժամանակը	5 րոպե
	մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը	30 րոպե
	պատասխանի սպասելու ժամանակը	60 րոպե

Թիվ	Պարամետրերը	Նկարագրությունը
	կրկնությունների քանակը	3
9	Տրանզակցիայի հաղորդագրությունները. սկզբնավորող հաղորդագրություն պատասխան հաղորդագրություն	ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ներկայացում(DECLARATION.MSG.001) տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում (DECLARATION.MSG.002)

9.4.2. «Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» տրանզակցիայի պարամետրերը

Բիզնես գործընթացի «Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» տրանզակցիայի (DECLARATION.TRN.002) պարամետրերը ներկայացված են 22-րդ աղյուսակում:

Աղյուսակ 22

«Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների ներկայացում» տրանզակցիայի (DECLARATION.TRN.002) նկարագրությունը

Թիվ	Պարամետրերը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.TRN.002
2	Տրանզակցիայի անվանումը	Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում
3	Նախաձեռնողը	Ուղարկող մաքսային մարմին
4	Սկզբնավորող գործառնությունը	ապրանքների հայտարարագրից փոփոխված տեղեկությունների ներկայացում
5	Ռեսպոնդենտը	Ստացող մաքսային մարմին
6	Ընդունող գործառնությունը	ապրանքների հայտարարագրից փոփոխված տեղեկությունների ստացում և մշակում
7	Տրանզակցիայի արդյունքը	ապրանքների հայտարարագիր (DECLARATION.BEN.001). փոփոխություններն ստացվել են
8	Տրանզակցիայի պարամետրերը.	

Թիվ	Պարամետրերը	Նկարագրությունը
	ստացումը հաստատելու ժամանակը	5 րոպե
	մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը	30 րոպե
	պատասխանի սպասելու ժամանակը	60 րոպե
	կրկնությունների քանակը	3
9	Տրանզակցիայի հաղորդագրությունները. սկզբնավորող հաղորդագրություն պատասխան հաղորդագրություն	ապրանքների հայտարարագրից տեղեկությունների փոփոխություններ (DECLARATION.MSG.003) տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում (DECLARATION.MSG.004)

9.4.3. «Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունները չեղյալ համարելը» տրանզակցիայի պարամետրերը

Բիզնես գործընթացի «Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունները չեղյալ համարելը» տրանզակցիայի (DECLARATION.TRN.003) պարամետրերը ներկայացված են 23-րդ աղյուսակում:

Աղյուսակ 23

«Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունները չեղյալ համարելը» տրանզակցիայի (DECLARATION.TRN.003) նկարագրությունը

Թիվ	Պարամետրերը	Նկարագրությունը
1	Ծածկագրային նշագիրը	DECLARATION.TRN.003
2	Տրանզակցիայի անվանումը	ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունները չեղյալ համարելը
3	Նախաձեռնողը	Ուղարկող մաքսային մարմին
4	Սկզբնավորող գործառնությունը	ապրանքների հայտարարագրից տեղեկությունները չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկությունների ներկայացում

Թիվ	Պարամետրերը	Նկարագրությունը
5	Ռեսպոնդենտը	Ստացող մաքսային մարմին
6	Ընդունող գործառնությունը	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունները չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկությունների ստացում և մշակում
7	Տրանզակցիայի արդյունքը	ապրանքների հայտարարագիր (DECLARATION.BEN.001). չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկություններն ստացվել են
8	Տրանզակցիայի պարամետրերը. ստացումը հաստատելու ժամանակը մշակման համար ընդունումը հաստատելու ժամանակը պատասխանի սպասելու ժամանակը կրկնությունների քանակը	5 րոպե 30 րոպե 60 րոպե 3
9	Տրանզակցիայի հաղորդագրությունները. սկզբնավորող հաղորդագրություն պատասխան հաղորդագրություն	ապրանքների հայտարարագրից տեղեկությունները չեղյալ համարելը (DECLARATION.MSG.005) Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում (DECLARATION.MSG.006)

9.5. Հաստատման ազդանշանները և բացառման ազդանշանները

Հաստատման ազդանշանների և բացառման ազդանշանների կառուցվածքն ու վավերապայմանի կազմը նկարագրելու համար օգտագործվում են հետևյալ անվանատարածքները, որոնք ներկայացված են ստորև՝ 24-րդ աղյուսակում:

Անվանատարածքները

Նախաձանցը	Հասցեն
xs	http://www.w3.org/2001/XMLSchema
sgn	urn: dectalarion: signal: v1.0

Հաստատման ազդանշանների և բացառման ազդանշանների կառուցվածքն ու վավերապայմանի կազմը նկարագրելու համար օգտագործվում են տվյալների հետևյալ բազային տեսակները, որոնք ներկայացված են ստորև՝ 25-րդ աղյուսակում:

Տվյալների բազային տեսակները

Անվանումը	Նկարագրությունը
sgn: EDocIdType	Փաստաթղթի նույնականացուցիչ, որը UUID է՝ ISO / IEC 9834-8:2005 ստանդարտին համապատասխան: [0-9a-fA-F] \ {8 \} - [0-9a-fA-F] \ {4 \} -[0-9a-fA-F] \ {4 \} - [0-9a-fA-F] \ {4 \} - [0-9a-fA-F] \ {12 \} ձևանմուշով պայմանանշանների տող
sgn: DateTimeType	Ըստ Գրիգորյան օրացույցի սահմանված տվյալներ և ժամանակ՝ ISO 8601 ստանդարտի ձևաչափով. «Տվյալների տարրեր և փոխանակման ձևաչափեր. Տեղեկությունների փոխանակում. Ամսաթվերի և տեսակների ներկայացում» («Data elements and interchange formats – Information interchange – Representation of dates and types»)
sgn: ErrorCodeType	Հսկողության սխալի ծածկագրային նշագիրը: Տողը բաղկացած է 1-ից 225 պայմանանշաններից:
sgn: StringType	Կամայական տեղեկություններ տեքստային ձևով: Կամայական երկարության տող

9.5.1. «Ստացված է» հաստատման ազդանշանը

Բիզնես գործընթացի հաղորդագրությունն ստացողը «Ստացված է» հաստատման ազդանշանը կուղարկի այն պահին, երբ իրականացված կլինի բլոկի բովանդակության կառուցվածքային հսկողությունը:

«Ստացված է» հաստատման ազդանշանի համար P.MSG.RCV հաղորդագրության ծածկագիրը կօգտագործվի այն դեպքում, երբ կձևավորվի բիզնես գործընթացի հաղորդագրությունը նույնականացնող՝ wsa:Action գլխագիրը: Հաղորդագրության բովանդակության վերաբերյալ տվյալների այլ բաղադրիչներ սահմանվում են համաձայն կիրառական հաղորդագրությունների համար wsa:Action գլխագրի ձևավորման կանոնների՝ նկարագրված սույն փաստաթղթի 7.2 բաժնում:

«Ստացված է» հաստատման ազդանշանի կառուցվածքը և վավերապայմանի կազմը բերված են 26-րդ աղյուսակում:

Աղյուսակ 26

«Ստացված է» հաստատման ազդանշանի կառուցվածքը և վավերապայմանի կազմը

Տարրը	Տվյալների տեսակը	Նկարագրությունը	Հարաբերակցությունը
sgn: DeliveryReceipt	sgn: DeliveryReceiptType	«Ստացված է» հաստատման ազդանշանի շրջափոխող տարրը	
sgn: SignalId	sgn: EDocIdType	ազդանշանի նույնացուցիչը	1
sgn: DateTime	sgn: DateTimeType	«Ստացված է» հաստատման ազդանշանի ձևավորման ամսաթիվն ու ժամը	1

9.5.2. «Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանը

«Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանը հաղորդագրությունն ստացողի կողմից ուղարկվում է մինչև բովանդակության բլոկի տվյալների մշակումը:

«Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանի համար P.MSG.PRS հաղորդագրության ծածկագիրը կօգտագործվի այն դեպքում, երբ կձևավորվի բիզնես գործընթացի հաղորդագրությունը նույնականացնող՝ wsa:Action գլխագիրը:

Հաղորդագրության բովանդակության վերաբերյալ տվյալների այլ բաղադրիչներ սահմանվում են համաձայն կիրառական հաղորդագրությունների համար wsa:Action գլխագրի ձևավորման կանոնների՝ նկարագրված սույն փաստաթղթի 7.2 բաժնում:

«Ընդունված է մշակման» ազդանշան-հաստատման կառուցվածքը և վավերապայմանի կազմը բերված են 27-րդ աղյուսակում:

Աղյուսակ 27

«Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանի կառուցվածքը և վավերապայմանի կազմը

Տարրը	Տվյալների տեսակը	Նկարագրությունը	Հարաբերակցությունը
sgn: ProcessingReceipt	sgn: ProcessingReceiptType	«Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանի շրջափոխող տարրը	
sgn: SignalId	sgn: EDocIdType	ազդանշանի նույնացուցիչը	1
sgn: DateTime	sgn: DateTimeType	«Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանի ձևավորման ամսաթիվն ու ժամը	1

9.5.3. «Սխալ» բացառման ազդանշանը

Իրավիճակը, երբ հաղորդագրություն ստացողն ուղարկողին ուղարկում է «Սխալ» բացառման ազդանշանը, կառաջանա հետևյալ դեպքերում՝

ա) ստացողն ընդունել է բիզնես գործընթացի այնպիսի հաղորդագրություն, որը չէր ակնկալվում, որ կստացվեր տրանզակցիայի իրականացման շրջանակներում.

բ) ստացողը բլոկի բովանդակության կառուցվածքային կամ

ձևաչափատրամաբանական հսկողության ընթացքում սխալներ է հայտնաբերել:

գ) անուղղելի սխալը, որը տվյալների կիրառական մշակումն անհնար է դարձնում, առաջացել է տվյալների կիրառական մշակման փուլում:

Իրավիճակը, երբ ստացողն ստացել է բիզնես գործընթացի այնպիսի հաղորդագրություն, որը չէր ակնկալվում, որ կստացվեր տրանզակցիայի իրականացման շրջանակներում, կառաջանա հետևյալ դեպքերում՝

ստացված հաղորդագրությունը բիզնես գործընթացի հաղորդագրություն է կամ հաստատման ազդանշանն է, հետևաբար, չի կիրառվում ստացողի կողմից կատարվող տրանզակցիաների նկատմամբ:

ստացողը լիազորված չէ մշակելու ստացված հաղորդագրությունը (եթե նա Բիզնես գործընթացի, ընթացակարգի կամ տրանզակցիայի մասնակից չէ):

Տվյալ դեպքերում «Սխալ» բացառման ազդանշանի սխալի հսկողության (sgn: Code դաշտ) ծածկագրային նշագրին տրվում է «Common: UnexpectedMessage» արժեքը (ծածկագիրը):

Եթե ստացողը բլոկի բովանդակության կառուցվածքային հսկողության ընթացքում հայտնաբերում է սխալ, ապա «Սխալ» բացառման ազդանշանի սխալի հսկողության (sgn: Code վանդակ) ծածկագրային նշագրին տրվում է «Common:DataError» արժեքը (ծածկագիրը):

Եթե ստացողը բիզնես գործընթացի հաղորդագրության ձևաչափատրամաբանական հսկողության ընթացքում հայտնաբերում է սխալ, ապա «Սխալ» բացառման ազդանշանի սխալի հսկողության (sgn: Code դաշտ) ծածկագրային նշագրին տրվում է այն կանոնի ծածկագրի արժեքը, որի (կանոնի) ստուգման շրջանակներում առաջացել է սխալը՝ համաձայն 32-րդ, 33-րդ և 34-րդ աղյուսակների:

Եթե առկա է իրավիճակ, երբ բովանդակության բլոկի տվյալների մշակման փուլում առաջացել է այնպիսի անուղղելի սխալ, որը տվյալների մշակումն անհնար է դարձնում, ապա «Սխալ» բացառման ազդանշանի սխալի հսկողության (sgn: Code դաշտ) ծածկագրային նշագրին տրվում է «Common:FatalError» արժեքը (ծածկագիրը):

Անուղղելի սխալների ցանկը սահմանվում է Բիզնես գործընթացի մասնակցի կողմից՝ ինքնուրույն:

«Սխալ» բացառման ազդանշանի համար P.MSG.ERR հաղորդագրության ծածկագիրը կօգտագործվի այն դեպքում, երբ կձևավորվի բիզնես գործընթացի հաղորդագրությունը նույնականացնող՝ wsa:Action գլխագիրը: Հաղորդագրության բովանդակության վերաբերյալ տվյալների այլ բաղադրիչներ սահմանվում են համաձայն կիրառական հաղորդագրությունների համար wsa:Action գլխագրի ձևավորման կանոնների:

«Սխալ» բացառման ազդանշանի կառուցվածքը և վավերապայմանի կազմը բերված են 28-րդ աղյուսակում:

Տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցելու համար Բիզնես գործընթացի մասնակիցներն իրենց կողմից պետք է իրականացնեն Բիզնես գործընթացի ընթացակարգերը կիրարկող ծառայությունները:

Աղյուսակ 28

«Սխալ» բացառման ազդանշանի կառուցվածքը և վավերապայմանի կազմը

Տարրը	Տվյալների տեսակը	Նկարագրությունը	Հարաբերակցությունը
sgn: ValidationError	sgn: ValidationErrorType	«Սխալ» բացառման ազդանշանի շրջափոխող տարրը	
sgn: SignalId	sgn: EDocIdType	«Սխալ» բացառման ազդանշանի նույնացուցիչը	1
sgn: DateTime	sgn: DateTimeType	«Սխալ» բացառման ազդանշանի ամսաթիվն ու ժամը	1
sgn: Error	sgn: ErrorType	շրջափոխող տարրը	1..*
sgn: Code	sgn: ErrorCodeType	սխալի ծածկագրային նշագիրը	1
sgn: Description	sgn: StringType	սխալի տեքստի արժեքը	1
sgn: Details	sgn: StringType	սխալի մասին մանրամասն տվյալներ	0..1
sgn: EDocId	sgn: EDocIdType	այն փաստաթղթի նույնացուցիչը, որում առաջացել է սխալը: Այն լրացվում է, եթե սխալը կապված է հատուկ փաստաթղթի հետ, և դուրս է բերվել փաստաթղթի նույնացուցիչը	0..1
sgn: Reference	sgn: StringType	պայմանանշանների տող, որը թույլ է տալիս միանշանակ տեղայնացնել սխալն առաջացրած տարրը	0..1

9.6. Սխալի մասին տեխնոլոգիական հաղորդագրություն

Եթե սխալն առաջանում է գլխագրի տեխնոլոգիական հսկողության կամ բովանդակության բլոկի կառուցվածքային հսկողության փուլում, ապա պետք է ձևավորվի սխալի մասին տեխնոլոգիական հաղորդագրություն: Սխալի մասին տեխնոլոգիական հաղորդագրության բովանդակության բլոկը պետք է պարունակի այնպիսի տարրեր, որոնց խումբը բերված է 29-րդ աղյուսակում:

Տեխնոլոգիական հաղորդագրության բովանդակության բլոկի կազմը

Տարրը	Տվյալների տեսակը	Նկարագրությունը	Հարաբերակցությունը
soap:Fault	soap:Fault	բլոկի շրջափոխող տարրը	
soap:Code	soap:faultcode	շրջափոխող տարրը	1
soap:Value	soap:faultcodeEnum	սխալի դասը	1
soap:Subsode	soap:subcode	սխալի ծածկագրի շրջափոխող տարրը	1
soap:Value	xs:QName	սխալի ծածկագիրը	1
soap:Reason	soap:faultreason	սխալի տեքստի նկարագրության շրջափոխող տարրը	1
soap:Text	soap:reasontext	սխալի տեքստի նկարագրության բլոկը	1..*
@xml:lang	-	լեզվական նույնացուցիչը	1
soap:Detail	soap:detail	սխալի մանրամասները	0..1

soap:Code / soap:Value տարրը պետք է լրացվի SOAP 1.2 մասնագրի համաձայն:

soap:Code / soap:Subsode / soap:Value տարրը պետք է պարունակի սխալի ծածկագիրը:

Միայնների տիպային ծածկագրերի ցանկը և WS-Addressing 1.0 – Binding մասնագրերի ծածկագրերի օգտագործման կանոնները բերված են 30-րդ աղյուսակում:

Միայնների ծածկագրերի տեսակները

Սխալի դասը	Սխալի ծածկագիրը	Նկարագրությունը և կիրառման առանձնահատկությունները
------------	-----------------	---

Սխալի դասը	Սխալի ծածկագիրը	Նկարագրությունը և կիրառման առանձնահատկությունները
soap:Sender	wsa:InvalidAddressingHeader	Այն օգտագործվում է WS-Addressing 1.0-Binding մասնագրով սահմանված կանոնների համաձայն՝ հետևյալ սահմանափակումներով՝ Subsubcode-ի արժեքներ չեն օգտագործվում, չի գեներացվում և չի ուղարկվում wsa: DuplicateMessageID տեսակի սխալ
soap:Sender	wsa:MessageAddressingHeaderRequired	Այն օգտագործվում է WS-Addressing 1.0-Binding մասնագրով սահմանված կանոնների համաձայն
soap:Sender	wsa:DestinationUnreachable	Այն օգտագործվում է WS-Addressing 1.0-Binding մասնագրով սահմանված կանոնների համաձայն
soap:Sender	wsa:ActionNotSupported	Այն օգտագործվում է WS-Addressing 1.0-Binding մասնագրով սահմանված կանոնների համաձայն
soap:Sender	int:InvalidHeader	Բացակայում են ինտեգրված համակարգի մեկ կամ ավելի հատուկ գլխագրեր
soap:Receiver	wsa:EndpointUnavailable	Այն օգտագործվում է WS-Addressing 1.0-Binding մասնագրով սահմանված կանոնների համաձայն՝ հետևյալ սահմանափակմամբ՝ wsa:RetryAfter տարրը չպետք է օգտագործվի տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման իրագործման շրջանակներում
soap:Receiver	int:InternalError	Հաղորդագրությունը մշակելիս առաջացել է անսպասելի սխալ
soap:Sender	int:DataError	Ստացված կիրառական տվյալներն ունեն սխալ կառուցվածք

soap:Text տարրը պետք է պարունակի սխալի տեքստի նկարագրություն:

soap:Text-ի յուրաքանչյուր տարր պետք է պարունակի xml:lang լեզվական նույնացուցիչ՝ ձևավորված XML 1.0 մասնագրի համաձայն:

Եթե սխալի մասին տեխնոլոգիական հաղորդագրության մեջ առկա է soap:Text-ի տարրերի խումբ, ապա այդ տարրերից յուրաքանչյուրը պետք է պարունակի xml:lang լեզվական նույնացուցիչ, որը տարբերվում է soap:Text-ի այլ տարրերի այլ նույնացուցիչներից:

Սխալի մասին տեխնոլոգիական հաղորդագրությունը պետք է պարունակի soap:Text-ի առնվազն մեկ տարր, որի բովանդակությունը ներկայացվում է անգլերենով, և xml:lang լեզվական նույնացուցիչը պետք է պարունակի «en» արժեքը:

soap: Detail-ի կամընտրական տարրը պետք է պարունակի սխալը մանրամասն ներկայացնող տեղեկություններ:

9.7. Ծառայությունների տեխնիկական իրականացումը

Արտաքին անցուղու և Վիետնամի ազգային մեկ պատուհանի՝ տեղեկատվական փոխգործակցության ծառայությունների միջև տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է SOAP-ծառայությունների օգնությամբ:

EECDECLARATION ծառայությունն օգտագործվում է հայտարարագրերին առնչվող տեղեկատվական փոխգործակցության համար:

EECDECLARATION ծառայության մեթոդները բերված են 31-րդ աղյուսակում:

Աղյուսակ 31

EECDECLARATION ծառայության մեթոդների ցանկը

Հ/հ	Մեթոդը	Ծառայության նկարագրությունը
1	sendDeclarationDocument	Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների տրամադրում
2	updateDeclarationDocument	Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում
3	deleteDeclarationDocument	Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունների չեղարկում
4	sendSignal	Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում
5	sendResult	Մշակման արդյունքի ստացում

9.7.1. «sendDeclarationDocument» մեթոդը

Նպատակը՝ «Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների ստացում և մշակում» (DECLARATION.OPR.002) գործառնության իրականացում

Բիզնես գործընթացի ընթացակարգը՝ DECLARATION.PRC.001

Նկարագրությունը՝ Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների տրամադրում

Ներմուծման պարամետրերը՝ DECLARATION.MSG.001 (Declaration)

Արտահանման պարամետրերը՝ տվյալները բացակայում են

Աշխատանքի ալգորիթմի նկարագրությունը՝

Ծառայության կատարման մեջ հաղորդագրությունների մշակման քայլերը պետք է համապատասխանեն սույն՝ 9.3 բաժնում սահմանված կանոններին՝

1. Հաղորդագրության տեխնոլոգիական հսկողությունը,
2. Բովանդակության բլոկի կառուցվածքային հսկողությունը,
3. Բովանդակության բլոկի տվյալների մշակումը:

Հաղորդագրությունների մշակման բոլոր քայլերը պետք է կատարվեն Վիետնամի մասով իրականացվող ծառայությունների համար:

Արտաքին անցուղու մասով իրականացվող ծառայությունների համար պետք է կատարվեն քայլ 1-ը և 2-ը: Քայլ 3-ը մշակվում և իրականացվում է անդամ պետությունների մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերում:

Բովանդակության բլոկի կառուցվածքային հսկողությունը ներառում է «Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.MSG.001) հաղորդագրության կառուցվածքի ստուգումը՝ «Ապրանքների հայտարարագրի էլեկտրոնային պատճեններից տեղեկություններ» (Հայտարարագիր) կառուցվածքի հետ համապատասխանության մասով, որի նկարագիրը ներկայացված է Ա առդիրում:

Տեխնոլոգիական և կառուցվածքային հսկողության դրական արդյունքի դեպքում պետք է գեներացվի և ուղարկվի «Ստացված է» հաստատման ազդանշանը: «Ստացված է» հաստատման ազդանշանը փոխանցվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendSignal):

Եթե տեխնոլոգիական և կառուցվածքային հսկողության արդյունքում սխալներ են ի հայտ գալիս, ապա ստացողն ուղարկողին պետք է ուղարկի soap:Sender դասի սխալի մշակման հաղորդագրություն: Սխալի մասին տեխնոլոգիական հաղորդագրության մանրամասն նկարագրությունը ներկայացված է 9.6 բաժնում:

Նախքան բովանդակության տվյալների բլոկի մշակումն սկսելը պետք է գեներացվի և ուղարկվի «Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանը: «Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանը փոխանցվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendSignal):

Հաղորդագրության բովանդակության տվյալների բլոկի մշակման մեթոդին ներկայացվող պահանջները, մշակման արդյունքի պահպանմանը ներկայացվող պահանջները սահմանվում են տեղեկությունների փոխանակման մասնակիցների

կողմից:

Հաղորդագրության բովանդակության տվյալների բլոկի հաջող մշակման դեպքում պետք է ձևավորվի և ուղարկվի «Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում» (DECLARATION.MSG.002) պատասխան հաղորդագրությունը: «Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում» (DECLARATION.MSG.002) հաղորդագրությունն ուղարկվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Մշակման արդյունքի ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendResult):

Եթե բովանդակության բլոկի տվյալների մշակման ժամանակ սխալ է տեղի ունեցել, ապա պետք է գեներացվի և ուղարկվի «Սխալ» բացառման ազդանշանը:

«Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների տրամադրում» (DECLARATION.TRN.001) տրանզակցիայի շրջանակներում՝ նախապես սահմանված հնարավոր սխալների ցանկը ներկայացված է 32-րդ աղյուսակում:

Աղյուսակ 32

Սխալի ծածկագիրը	Սխալի նկարագրությունը
1	Կրկնորդման սխալ: Ապրանքների հայտարարագրի գրանցման համարը գտնվել է նախկինում ներկայացված հայտարարագրերի շարքում:

«Սխալ» բացառման ազդանշանի փոխանցումը կատարվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendSignal):

9.7.2. «updateDeclarationDocument» մեթոդը

Նպատակը՝ «Ապրանքների հայտարարագրից փոփոխված տեղեկությունների ստացում և մշակում» (DECLARATION.OPR.005) գործառնության իրականացում

Բիզնես գործընթացի ընթացակարգը՝ DECLARATION.PRC.002

Նկարագրությունը՝ Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում:

Ներմուծման պարամետրերը՝ DECLARATION.MSG.003 (Declaration)

Արտահանման պարամետրերը՝ տվյալները բացակայում են

Աշխատանքի ալգորիթմի նկարագրությունը՝

Ծառայության կատարման մեջ հաղորդագրությունների մշակման քայլերը պետք է համապատասխանեն սույն՝ 9.3 բաժնում սահմանված կանոններին՝

1. Հաղորդագրության տեխնոլոգիական հսկողությունը,
2. Բովանդակության բլոկի կառուցվածքային հսկողությունը,
3. Բովանդակության բլոկի տվյալների մշակումը:

Հաղորդագրությունների մշակման բոլոր քայլերը պետք է կատարվեն Վիետնամի մասով իրականացվող ծառայությունների համար:

Արտաքին անցուղու մասով իրականացվող ծառայությունների համար պետք է կատարվեն քայլ 1-ը և 2-ը: Քայլ 3-ը մշակվում և իրականացվում է անդամ պետությունների մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերում:

Բովանդակության բլոկի կառուցվածքային հսկողությունը ներառում է «Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների փոփոխություններ» (DECLARATION.MSG.003) հաղորդագրության կառուցվածքի ստուգումը՝ «Ապրանքների հայտարարագրի էլեկտրոնային պատճեններից տեղեկություններ» (Հայտարարագիր) կառուցվածքի հետ համապատասխանության մասով, որի նկարագիրը ներկայացված է Ա առդիրում:

Տեխնոլոգիական և կառուցվածքային հսկողության դրական արդյունքի դեպքում պետք է գեներացվի և ուղարկվի «Ստացված է» հաստատման ազդանշանը: «Ստացված է» հաստատման ազդանշանը փոխանցվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendSignal):

Եթե տեխնոլոգիական և կառուցվածքային հսկողության արդյունքում սխալներ են ի հայտ գալիս, ապա ստացողն ուղարկողին պետք է ուղարկի soap:Sender դասի սխալի մշակման հաղորդագրություն: Սխալի մասին տեխնոլոգիական հաղորդագրության մանրամասն նկարագրությունը ներկայացված է 9.6 բաժնում:

Նախքան բովանդակության տվյալների բլոկի մշակումն սկսելը պետք է գեներացվի և ուղարկվի «Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանը: «Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանը փոխանցվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendSignal):

Հաղորդագրության բովանդակության տվյալների բլոկի մշակման մեթոդին ներկայացվող պահանջները, մշակման արդյունքի պահպանմանը ներկայացվող պահանջները սահմանվում են տեղեկությունների փոխանակման մասնակիցների կողմից:

Հաղորդագրության բովանդակության տվյալների բլոկի հաջող մշակման դեպքում պետք է ձևավորվի և ուղարկվի «Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում» (DECLARATION.MSG.004) պատասխան

հաղորդագրությունը: «Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում» (DECLARATION.MSG.004) հաղորդագրությունն ուղարկվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Մշակման արդյունքի ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendResult):

Եթե բովանդակության տվյալների բլոկի մշակման ժամանակ սխալ է տեղի ունեցել, ապա պետք է գեներացվի և ուղարկվի «Սխալ է» բացառման ազդանշանը:

«Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ուղարկված տեղեկությունների փոփոխում» (DECLARATION.TRN.002) տրանզակցիայի շրջանակներում՝ նախապես սահմանված հնարավոր սխալների ցանկը ներկայացված է 33-րդ աղյուսակում:

Աղյուսակ 33

Սխալի ծածկագիրը	Սխալի նկարագրությունը
2	Թարմացման սխալ: Ապրանքների հայտարարագիրը (կամ ապրանքների այն հայտարարագիրը, որի գրանցման համարը փոխվել է) չի գտնվել նախկինում ներկայացված հայտարարագրերի շարքում

«Սխալ» բացառման ազդանշանի փոխանցումը կատարվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendSignal):

9.7.3. «deleteDeclarationDocument» մեթոդը

Նպատակը՝ «Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների չեղարկման մասին տեղեկությունների ստացում և մշակում» (DECLARATION.OPR.008) գործառնության իրականացում

Բիզնես գործընթացի ընթացակարգը՝ DECLARATION.PRC.003

Նկարագրությունը՝ Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունների չեղարկում

Ներմուծման պարամետրերը՝ DECLARATION.MSG.005 (Declaration)

Արտահանման պարամետրերը՝ տվյալները բացակայում են

Աշխատանքի ալգորիթմի նկարագրությունը՝

Ծառայության կատարման մեջ հաղորդագրությունների մշակման քայլերը պետք է համապատասխանեն սույն՝ 9.3 բաժնում սահմանված կանոններին՝

1. Հաղորդագրության տեխնոլոգիական հսկողությունը,
2. Բովանդակության բլոկի կառուցվածքային հսկողությունը,
3. Բովանդակության բլոկի տվյալների մշակումը:

Հաղորդագրությունների մշակման բոլոր քայլերը պետք է կատարվեն Վիետնամի մասով իրականացվող ծառայությունների համար:

Արտաքին անցուղու մասով իրականացվող ծառայությունների համար պետք է կատարվեն քայլ 1-ը և 2-ը: Քայլ 3-ը մշակվում և իրականացվում է անդամ պետությունների մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերում:

Բովանդակության բլոկի նկատմամբ կառուցվածքային հսկողությունը ներառում է «Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների չեղարկումը» (DECLARATION.MSG.005) հաղորդագրության կառուցվածքի ստուգումը՝ «Ապրանքների հայտարարագրի էլեկտրոնային պատճեններից տեղեկություններ» (Հայտարարագիր) հաղորդագրության կառուցվածքին համապատասխանության մասով, որի նկարագրությունը բերված է Ա առդիրում:

Տեխնոլոգիական և կառուցվածքային հսկողության դրական արդյունքի դեպքում պետք է գեներացնել և ուղարկել «Ստացված է» հաստատման ազդանշանը: «Ստացված է» հաստատման ազդանշանը փոխանցվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendSignal):

Եթե տեխնոլոգիական և կառուցվածքային հսկողության արդյունքում սխալներ են ի հայտ գալիս, ապա ստացողն ուղարկողին պետք է ուղարկի soap:Sender դասի սխալի մշակման հաղորդագրություն: Սխալի մասին տեխնոլոգիական հաղորդագրության մանրամասն նկարագրությունը ներկայացված է 9.6 բաժնում:

Նախքան բովանդակության տվյալների բլոկի մշակումն սկսելը պետք է գեներացվի և ուղարկվի «Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանը: «Ընդունված է մշակման» հաստատման ազդանշանը փոխանցվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendSignal):

Հաղորդագրության բովանդակության տվյալների բլոկի մշակման մեթոդին ներկայացվող պահանջները, մշակման արդյունքի պահպանմանը ներկայացվող պահանջները սահմանվում են տեղեկությունների փոխանակման մասնակիցների կողմից:

Հաղորդագրության բովանդակության տվյալների բլոկի հաջող մշակման դեպքում պետք է գեներացնել և ուղարկել «Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում» (DECLARATION.MSG.006) պատասխան հաղորդագրությունը: «Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում» (DECLARATION.MSG.006) հաղորդագրությունն ուղարկվում է

սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Մշակման արդյունքի ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendResult):

Եթե բովանդակության բլոկի տվյալների մշակման ժամանակ սխալ է տեղի ունեցել, ապա պետք է գեներացվի և ուղարկվի «Սխալ է» բացառման ազդանշանը:

«Ապրանքների հայտարարագրից ավելի վաղ ներկայացված տեղեկությունների չեղարկումը» (DECLARATION.TRN.003) տրանզակցիայի շրջանակներում՝ նախապես սահմանված հնարավոր սխալների ցանկը ներկայացված է 34 աղյուսակում:

Աղյուսակ 34

Սխալի ծածկագիրը	Սխալի նկարագրությունը
3	Չեղարկման սխալ: Չեղարկված հայտարարագրի գրանցման համարը չի գտնվել նախկինում ներկայացված հայտարարագրերի շարքում:

«Սխալ» բացառման ազդանշանի փոխանցումը կատարվում է սկզբնական հաղորդագրությունն ուղարկողի կողմից «Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում» մեթոդի կանչի միջոցով (sendSignal):

9.7.4. «sendSignal» մեթոդը

Նպատակը՝ Հաստատման ազդանշանների և բացառման ազդանշանների ստացման և մշակման իրականացումը:

Բիզնես գործընթացի ընթացակարգը՝

DECLARATION.PRC.001,

DECLARATION.PRC.002,

DECLARATION.PRC.003:

Նկարագրությունը՝ Ընթացիկ մշակման կարգավիճակում ազդանշանների ստացում

Ներմուծման պարամետրերը՝

P.MSG.ERR

P.MSG.PRS

P.MSG.RCV:

Արտահանման պարամետրերը՝ տվյալները բացակայում են

Աշխատանքի ալգորիթմի նկարագրությունը՝

Ընթացակարգը որոշվում է ըստ այն ազդանշանի տեսակի և տրանզակցիայի, որի շրջանակներում ազդանշանը ստացվել է: (հղում պարբերություն 5.2-ին):

9.7.5. «sendResult» մեթոդը

Նպատակը՝ Գործառնությունների իրականացում՝

«Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում և մշակում» (DECLARATION.OPR.003),

«Ապրանքների հայտարարագրից փոփոխված տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ընդունում և մշակում» (DECLARATION.OPR.006),

«Ապրանքների հայտարարագրից տեղեկությունների չեղարկման մասին տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ընդունում և մշակում» (DECLARATION.OPR.009):

Բիզնես գործընթացի ընթացակարգը՝

DECLARATION.PRC.001,

DECLARATION.PRC.002,

DECLARATION.PRC.003

Նկարագրությունը՝ Տվյալների մշակման արդյունքի ստացում

Ներմուծման պարամետրերը՝

DECLARATION.MSG.002,

DECLARATION.MSG.004,

DECLARATION.MSG.006:

Արտահանման պարամետրերը՝ տվյալները բացակայում են

Աշխատանքի ալգորիթմի նկարագրությունը՝

Ընթացակարգը որոշվում է ըստ այն հաղորդագրության ծածկագրի և տրանզակցիայի, որի շրջանակներում ազդանշանը ստացվել է (հղում 5.2 պարբերությանը):

X. Տեղեկությունների անվտանգությունը

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների և

Վիետնամի կենտրոնական մաքսային մարմիններն իրենց պատասխանատվության ներքո գտնվող տարածքում իրարից անկախ ապահովում են տեղեկատվական անվտանգությունը՝ տեղեկությունների փոխանցման և մշակման ժամանակ:

Անդամ պետության տեղեկատվական տարածքում տեղեկությունների փոխանցման ժամանակ տեղեկատվական անվտանգությունն ապահովվում է ազգային օրենսդրությանը և տվյալ անդամ պետության տարածքում գործող՝ տեղեկատվական անվտանգությանը ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան:

Վիետնամի տեղեկատվական տարածքում տեղեկությունների փոխանցման ժամանակ տեղեկատվական անվտանգությունն ապահովվում է ազգային օրենսդրությանը և Վիետնամի տարածքում գործող՝ տեղեկատվական անվտանգությանը ներկայացվող տեխնիկական պահանջներին համապատասխան:

